№ 258 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20

1908
ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20 № 258

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելէֆօն № 253.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, Նոյեմբերի 23-ին
տեղի կունենայ

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

Դիմակների համար առմասկներ պ. պ. անդամներին և կանդիդատներին կը տրվեն ժողովարանի շվեյցարի ձեռքով՝ ամեն օր առաւօտեան ժամը 10—2-ը ցերեկվայ և 7—10 երեկոյեան։

Հիւրերը թոյլատրվում են համաձայն ժողովարանի կանոնադրութեան՝ վճարելով մուտքի համար—տղամարդիկ 2 ր., իսկ կանայք ձրի։

(Հ. կ.) ա. 2—1

Շուտով մամուլին կը յանձնվի մի մեծ վէպ, հեղինակութիւն անգլիացի գրող Ճ. Պ. ՊԸՐԺԵՆԻ, Թարգմանութիւն անգլիերէնից Մինաս Ցոլակի, հետևեալ վերնագրով՝

ԳԱՐԱ ՕՂԼՈՒ

(Հայ ապստամբի մը կեանքէն)

(Ե. Հ. Կ.) (առ.) 3—1

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԹՄՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Հասարակութեան այն խաւերում, որտեղ քննվում և մշակվում են հրատապ հասարակական խնդիրներ, ներկայումս նկատվում է թմրութիւն, աչքի է զարնում հիասթափութիւն և՝ իբրև հետևանք այդ բոլորի՝ անտարբերութիւն դէպի հանրային շահերը։

Այդ թմրութիւնը և անտարբերութիւնը սառն շունչ են փչում գործել ցանկացողների և նոր ծրագիրներով հանդէս եկողների վրա։

Բայց միևնոյն ժամանակ երբեք կեանքը այնքան կարիքներ և պահանջներ չէր ասպարէզ մղել, որքան այժմ։

Ոչ միայն կենտրօնական մեր քաղաքների, այլ և գաւառի զանազան մասերում ուժեղ կերպով զգացվել է և օրէ-օր աւելի ու աւելի զգալի ու անյետաձգելի է դառնում շինարար կուլտուրական գործունէութեան կարիքը։

Մի կողմից կարիքների և պահանջների սուր զգացումը, իսկ միւս կողմից նրանց բաւարարութիւն տալու անկարութիւնը և անընդունակութիւնը՝ յատկանիշն են մեր ներկայ իրականութեան։

Սակայն ժամանակակից սերնդի զգայուն ոգիները և փոքր ի շատէ կայուն և չընկճվող բնաւորութիւնները պէտք է դիմադրական մի եռանդուն շարժում առաջ բերեն թմրութեան և անտարբերութեան դէմ, քաջալերելով ու խրախուսելով միմեանց և գործի հրաւիրելով ժողովրդի ստեղծագործող և շինարար տարրերը։

Անցողական շրջանի փայլուն խոստումներից և ուժեղ ցնցումներից յետոյ՝ այնպէս է թւում, թէ բարենորոգչական գործունէութիւնը յետ է մղված և մարդիկ դատապարտված են ժամանակաւոր մի նինջի, մինչև գան նոր աւելի երջանիկ օրեր բեղմնաւոր գործունէութեան համար։

Մենք անշուշտ նպաստաւոր պատմական շրջանում չենք գտնվում և հասարակական գործունէութեան համար լայն ու ընդարձակ ասպարէզ չէ բացված, բայց հիմնովին սխալ կը լինէր ձեռքերը ծալած նստել և սպասել ապագայ եդեմական հովերին։ Կեանքը պահանջում է գործել և անդադար գործել՝ պատրաստելով հող մեծ կուլտուրական և հասարակական բարեփոխութիւնների համար։

Թող մի կողմ գնան հիասթափութիւնը և վհատութիւնը։

Եռանդուն և լուրջ ջանքերով կարելի է գործունէութեան հրաւիրել ժողովրդի շինարար ույժերը և նրանց միացնելով ու կազմակերպելով ստեղծել կուլտուրական առաջադիմութեան մի զօրաւոր և անընկճելի շարժում։

Երբ կը սկսեն գործել բոլոր թարմ և կայուն ույժերը եռանդուն գործակցութեամբ, այն ժամանակ կը չքանայ մահացնող հասարակական թմրութիւնը, որ նկատվում է ներկայումս իրականութեան մէջ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 18 նոյեմբերի

Այսօր Թագաւոր Կայսրը ունկնդրութեան ընդունեց աւստրօ-ունգարական դեսպան կոմս Բերխտոլդին։ («Հ. Գ.»)

Պետերբուրգ, 17 նոյեմբերի

Երէկ ռուսական ժողովարանում զեկուցումներ կարդացին կովկասեան գործերի մասին Պուրիշկեվիչը, Բուլացելը և Մարկովը։ Պրիստաւը երկու անգամ կանգնեցրել է Բուլացելին, մատնանշելով այն արտայայտութիւնների անթոյլատրելիութիւնը, որով նա քննադատում էր Փոխարքայի գործունէութիւնները։ Բուլացելը, պատասխանելով նկատողութիւններին, շարունակել է նոյն ոգով։ Վերջում ժողովի նախագահ Շախօվսկին նկատողութիւն է արել պրիստաւին, յայտնելով որ նա իր դիտողութիւններով կարող էր դիմել ժողովի նախագահին, այլ ոչ ճառախօսին։

Օդեսսայում գօրօդօվօյների ու օֆիցերների միջև տեղի ունեցած արիւնահեղ ընդհարումը վերջնականապէս վճռել է քաղաքապետ Տօլմաչեվի հրաժարականի հարցը։ («Kc.»)

Թաւրիզ, 18 նոյեմբերի

Սաթթար-խանից Մարանդի նահանգապետ նշանակված Րիզա-Կուլի-խանը այսօր կալանաւորվեց իր եղբօր և կողմնակիցների հետ։ Նշանակվեց նոր նահանգապետ։

Մակուի խանի ձիաւորները պաշարեցին Սալմաստը և նրա շրջակայքը։ Հայերը երկիւղ են կրում իրանց ընտանիքների և ազգականների համար, որովհետև խանը իբր թէ Թեհրանից հրաման է ստացել աջողութեան դէպքում խիստ պատժել Սալմաստը այնտեղ հայկական կոմիտէ գտնվելու պատճառով։ («Հ. Գ.»)

Ուրմի (մինչև Ջուլֆ պօստով), 18 նոյ.

Սաթթար-խանի կողմնակիցները Թաւրիզից դիմում են Սալմաստ, գրաւելով ճանապարհին հանդիպած գիւղերը. Թէավրիզում նրանք սպանել են կառավարչին։ Սալմաստի նահանգապետը օգնութիւն է խնդրել Մակուի խանից։ («Հ. Գ.»)

Մեշէդ, 18 նոյեմբերի

Ազգայնականութիւնը հոգևորականութեան դրդումով հրաժարվում է տուրքերը վճարել։

Երկրորդ օրն է, որ բազարները փակ են։

Քաղաքը զինւորական դրութեան մէջ է։ («Հ. Գ.»)

Լօնդօն, 18 նոյեմբերի

Րէյտէրին հեռագրում են Թեհրանից, նոյեմբերի 17-ին, որ արտաքին գործերի պարսկական մինիստրն անգլօ-ռուսական նոտայի ուղարկած պատասխանի մէջ վերստին հաստատեց, որ շահը մտադիր է շնորհել մի այնպիսի մէջլիս, որ յարմար լինի Պ-ի բնաւորութեան և ցանկութիւններին։ Ամիրահաշի հրովարտակը կը հրատարակվի նոյեմբերի 19-ին։ Հրովարտակի մէջ հաւանութիւն է տրված բարենորոգումների արդէն հրատարակված ծրագրին։ Նրանում յիշատակութիւն չը կայ, որ նոր ռէժիմը որևէ փոփոխութիւն մտցնէ քաղաքականութեան մէջ։ Հրովարտակը բաղկացած է 20 գլուխներից. երկարատև ծառայութեան համար նշանակվելու են պարգևներ։ Ամնիստիան չի վերաբերի տաս աւելի ծանրագոյն յանցանքներին։ Դրանից բղխում է այն, որ այն անձերի դրութիւնը, որոնք սկզբում աքսորվել են պետական կարգը փոփոխելու փորձ անելու համար, հրովարտակով չի բարւոքվի։ («Հ. Գ.»)

Իրերի դրութիւնը Բալքաններում, ըստ երևոյթին, աւելի ու աւելի է յուզիչ կերպարանք ստանում։ Կոնֆերենցիա հրաւիրելու հարցը կախված է այժմ ոչ միայն Ռուսաստանից ու Աւստրիայից, այլ և այն բանից՝ թէ կաջողվի՞ արդեօք նախնական համաձայնութիւն կայացնել Վիէննայի ու Պօլսի միջև։

Մինչդեռ այդ մասին յոյսերը օրէցօր պակասում են։

Հաբսբուրգների թագաւորութեան ներքին ցաւալի վիճակը, Պետերբուրգի դիպլօմատիական շրջանների կարծիքով, աւելի ևս բարդացնում է այդ վիճակը, որովհետև հանգամանքները կարող են այդպիսով այնպէս դասաւորվել, որ Վիէննայի կաբինետին ուրիշ ելք չի մնայ, բայց եթէ գնալ պատերազմական աւանտիւրաների շաւղով, որպէսզի դրանով արգելք լինի իր ներքին օրգանիզմի սուր ճգնաժամի սկսվելուն։ («Р. С.»)

Վիէննա, 17 նոյեմբերի

Լուրերին նայելով, Բելգրադի աւստրիական դեսպանը յետ է կանչվում իր պաշտօնից։ («Kc.»)

Բելգրադ, 17 նոյեմբերի

Րօպէ առ րօպէ սպասվում է ամեն տեսակ բարդութիւնների, մինչև իսկ արիւնահեղ ընդհարումների։ Պետական գանձարանը, ինչպէս պարզվել է, այժմ գտնվում է բոլորովին ապահով տեղ։ Բացի 130 միլիօնից, որ փոխադրել են աւստրիացիների համար անմատչելի Կրագուէվացը, մօտ օրերս 200 միլիօն ֆրանկ էլ փոխադրված է Պարիզ։ («Kc.»)

Վիէննա, 18 նոյեմբերի

Բարօն Կօլը նշանակված է եապօնական աւստրօ-ունգարական դեսպան։ Էրենտալի և կոմս Բերխտոլդի հրաժարականի լուրերը ուղղակի մտացածին են։ Կայսրը Էրենտալին շնորհեց Սուրբ Ստեփանի մեծ խաչաձև շքանշանը, իսկ կոմս Բերխտոլդին՝ Լէօպօլդի խաչաձև մեծ շքանշանը։ («Հ. Գ.»)

Վիէննա, 18 նոյեմբերի

«Cor. Bureau»-ին հաղորդում են Կ. Պօլսից, որ բօլգարական երեք պատգամաւորներն էլ մեկնեցին։

Գնալուց առաջ Լեապչեվը Բ. Դրան մէջ հերքեց այն լուրը՝ թէ բօլգարական մինիստրութիւնը պաշտօնից հեռանում է։

Բ. Դուռը թիւրք-բօլգարական բանակցութիւնների մասին հրատարակել է հետևեալ տեղեկագիրը. «Բօլգարական պատգամաւորները քննեցին բաց մնացած այն բոլոր հարցերը, որոնց կարգաւորելը անհրաժեշտ հանդիսացաւ անկախութիւնը յայտարարելու պատճառով։ Պատգամաւորները մեկնեցին մինիստրների խորհրդին զեկուցում տալու համար։ Լեապչեվը կը վերադառնայ, հէնց որ Բ. Դուռը մեծ պետութիւնների հաւանութեամբ կարող կը լինի վերջնականապէս կարգի բերել բանակցութիւնների խնդիր դարձած հարցերը»։ («Հ. Գ.»)

Վիէննա, 18 նոյեմբերի

Պրագայում անկարգութիւնները և ընդհարումները շարունակվում են։ Գլխաւոր փողոցներում խանութները փակ են, առևտուրը խոշոր վնասներ է կրում։

Աւստրիայի գերմանական մամուլը պահանջում է բացառիկ դրութիւն մտցնել, մեղադրելով չեխերին պետական դաւաճանութեան մէջ։

Մամուլը, խստագոյնս բողոքելով իշխանութիւնների գործողութիւնների դէմ, յուզմունքի պատճառ համարում է Գերմանիային։ («Հ. Գ.»)

Վիէննա, 18 նոյեմբերի

«Cor. Bureau»-ն հաղորդում է, որ, նկատի առնելով որ Պրագայում վերջին օրերս վերսկսված ընդհարումները լուրջ բնաւորութիւն ընդունեցին, կառավարութիւնը պատուիրեց ադմինիստրացիային անկարգութիւնները ճնշելու համար գործ դնել ազդելու բոլոր անհրաժեշտ միջոցները ամենաընդարձակ ծաւալով և գործել մեծ եռանդով ու վճռողականութեամբ՝ կարգ ու կանոնը վերականգնելու համար. եթէ այդ ձեռնարկութիւններն էլ այժմ ցանկալի հետևանքներ չունենան, այն ժամանակ կը գործադրվեն ուրիշ միջոցներ։ («Հ. Գ.»)

Պրագա, 18 նոյեմբերի

Երէկ կէսօրից յետոյ Գրաբենում վերստին տեղի ունեցան ընդհարումներ։ Պահակները մերկացրին իրանց սրերը և ցրեցին ցուցարարներին, որոնք յետոյ խռնվեցին Վենցիսլավի հրապարակի վրա ու սկսեցին քարեր նետել պահակների վրա։ Եօթ պահակներ և մի ոստիկան վիրաւորվեցին։ Դրանից յետոյ ժանդարմները հանեցին սուրինները և մաքրեցին հրա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՕՍՖՕՐԻ ԱՓԵՐԻՑ

VII

*Իզմիրլեանի գահակալութիւնն ու ուխտը *)*

Երեսփոխանական ժողովի ատենապետը, այս ճառից յետոյ, Իզմիրլեանին երկարեց սահմանադրութեան տետրը. պատրիարքը հոգևորական դասից շրջապատված՝ դիմեց դէպի խորան և սահմանադրութեան տետրակը ձեռքին բռնած՝ պատասխանեց հետևեալ խօսքերով.

«Տէր ատենապետ և տեարք երեսփոխանք.

«Սահմանադրութեան վրայ նուիրական ուխտը կատարելէ առաջ, քանի մի խօսք՝ պատկառելի Ժողովիդ և ամբողջ ազգին։

«Մինչև ցարդ հրապարակային առիթը չունեցայ յայտնելու այն յուզումը, զոր կրեցի, այն սէրը, զոր վայելեցի ամբողջ հայ ժողովրդին կողմէ իմ տասներկուամեայ աքսորէ դարձիս առթիւ ի Ցօպպէ, ի Բէյրութ, յԻզմիր, ի Կ. Պօլիս, նաև մեր թիւրք հայրենակիցներէն, օրթօդօքս եկեղեցւոյ միտրօպօլիտներէն, հրէից րաբունապետներէն, նաև Պօլսոյ մէջ մեր թիւրք եղբայրներէն և հայրենակից թրքուհիներէն, նոյնպէս օրթօդօքս եկեղեցւոյ մեծ պատրիարք ամենապատիւ Յովակիմ սրբազանէն, որ իր փոխանորդով իմ վերադարձս ողջունեց, հրէից խախամապետէն, որ անձամբ այցելեց ինծի։ Այս ամենուն չկրցայ հրապարակաւ յայտնել իմ շնորհակալութիւններս և հիմա պատկառելի Ժողովիդ մէջ ես կը յայտնեմ խորին երախտագիտութիւնս։

«Հայոց Ազգը Հաւասարութեան, Արդարութեան և Ազատութեան վրայ հիմնեալ Օսմանեան Սահմանադրական Ազգին մէկ տարրը կը կազմէ և իբր այն՝ մենք քաղաքացիական պարտականութիւն ունենանք այս ընդարձակ երկրին սահմանադրական կազմակերպութեան աշխատիլ։ Այն եղբայրակցութիւնը, որ այս սկզբանց վրայ հաստատուած է, հաստատ պէտք է բռնենք և համերաշխաբար պէտք է աշխատինք երկրին յառաջադիմութեան և բարեկարգութեան համար։ Հոն է միայն օսմանեան երկրին ուժը կազմող տարրերուն խաղաղ բարգաւաճումն ու անդորրութիւնը։

«Հայ Ազգը և դուք, տեարք երեսփոխանք, եթէ զիս կը հրաւիրէք այս սահմանդրութեան վրայ ուխտելու, կըմբռնէք այս Օրէնքը պահելու նախանձախնդրութիւնը։ Ինծմէ ալ կը պահանջէք այս մեծ նախանձախնդրութիւնը, և ես պարտաւոր եմ ամեն ազդեցութիւնէ բարձր պահել այդ Օրէնքը, որ պիտի տիրապետէ Ազգին և Վարչութեան վրայ։ Այս ամեն բացատրութիւններով միայն կըմբռնեմ ես ուխտը։

«Նոյնպէս, Եկեղեցական Հարք և Եղբարք, մենք եկեղեցականքս մեր կոչման բարոյական բարձրութեան վրայ պէտք է գտնվինք. կարգապահութեան ամենէն մեծ և վսեմ օրինակը մենք պէտք է տանք։ Եկեղեցական Եղբայրք, Հայ Եկեղեցին իր սրբութեան, վեհութեան և աստուածպաշտութեան մէջ պէտք է պահպանենք։

«Այս ամեն պայմաններուն մէջ, տեարք երեսփոխանք, կուգամ այս ճշմարտութեան շնորհակալութիւնս յայտնել այն վստահութեան համար, զոր պատկառելի Ժողովդ կընծայէ ինծ, Ազգին պատրիարքութեան պաշտօնը յանձնելով այս տկար և ծեր անձին։

«Տեարք երեսփոխանք, չեմ յուսար, որ Ձեր վստահութեան մէջ սխալիք, բայց ես միայնակ ոչինչ կրնամ ընել. դուք աջակից պէտք է գտնուիք ինծի, որպէսզի կարող ըլլանք բաղձալի ուղիի մը մէջ մտնել։

«Շնորհակալութիւն և՛ ձեզ, տէր ատենապետ, ձեր այնքան գեղեցիկ բանաձևութեան համար, որով կուգաք քաջալերել զիս իմ տկարութեանս մէջ։

«Իբր պաշտօնեայ Ազգին և Եկեղեցւոյն, պարտաւոր եմ երթալ ուր որ Եկեղեցին և Ազգը կանչեն զիս։ Այսօր երբ ձեր ընտրութիւնը զիս պատրիարքական պաշտօնին կը կոչէ, ես կը փութամ կրկնել ինչ որ ըսի 1894-ի դեկտ. 27-ին։ Պարագաները նոյնն են։ Բայց Ամենակարողին վստահացած և պատկառելի Ժողովիդ աջակցութեան ակնդէտ, կը փութամ անգամ մը ևս կատարել սահմանադրական ուխտս։ Ինծի հետ ամեն մէկերնիդ ալ ուխտած պիտի ըլլաք պատկառ կենալ այս Օրէնքին։

«Հայոց Ազգը, տեարք երեսփոխանք, 500 տարիէ ի վեր իր հաւատարմութիւնը պահած է առ օսմանեան կայսրութիւնը։ Այսօր ևս օսմանեան սահմանադրական կառավարութեան հաւատարիմ մնալով՝ մենք մեզի հաւատարիմ մնացած կըլլանք, որովհետև մենք այդ սահմանադիր կառավարութեան մէկ մասն ենք։ Ձեր պատրիարքին հետ դուք ալ պէտք է ուխտէք համերաշխութեամբ գործակցիլ հայ, հայ հռոմէական, բողոքական, թիւրք, յոյն և հրէայ տարրերուն հետ։

«Այժմ լսեցէք իմ ուխտս»։

Իզմիրլեանի սահմանադրութեան փառաբանումին նուիրված այս ճառը գործեց խոր տպաւորութիւն։ Յետոյ նա դառնալով խորան, իւրաքանչիւր բառի վրա շեշտելով, արտասանեց հետևեալ ուխտը.

«Առաջի Աստուծոյ և ի ներկայութեան Ազգային Ժողովոյս, հրապարակաւ ուխտեմ հաւատարիմ մնալ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ տէրութեան և ազգիս և ճշմարտապէս հսկել Ազգային Սահմանադրութեան անթերի գործադրութեանը»։

Պէտք է աւելացնեմ, որ Ազգ. Սահմանադրութեան ուխտի բանաձևում ասված է միայն. «Հաւատարիմ մնալ տէրութեան». Իզմիրլեան՝ տէրութեան խօսքին կցեց ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ բառը։

Ուխտից յետոյ, որոտագին ծափերով պատրիարքն ընդունեց տեղապահ Դուրեան եպիսկոպոսից այն ասան, գաւազանը, որ ներկայացրեց վերջինը, իբրև նշան իշխանութեան։

Իզմիրլեան, երեսը դարձնելով դէպի ժողովուրդը, եզրակացրեց հետևեալ խօսքերով.

«Ահաւասիկ ուխտը, զոր կատարեցի առաջի Աստուծոյ։ Ցորչափ ապրիմ, պիտի պահեմ զայն հաւատարմութեամբ, ինչպէս նաև դուք պիտի պահէք»։

Այնուհետև խօսեցին զանազան անձինք։ Նախ պ. Հմայեակ Արամեանց, երեսփոխան, հին, սօցիալիստ հնչակեան, որ կոչ արեց ներկայ հասարակութեան մի «ամուր օղակ կազմել» իր և պատրիարքի միջև, մի այնպիսի օղակ, որ բռնակալութիւնն անկարող լինի խորտակել։

Ինքնապէս շատ հետաքրքիր էր լսել մի սօցիալիստի բերանից՝ փարել հոգևոր պետին, օղակ կազմել նրա հետ...

Յետոյ խօսեցին մի քահանայ, տեղապահը, որ արտասանեց մի գրական սիրուն ճառ, անշուշտ իր հոգևոր կոչման համապատասխան. Դուրեան իր ճառը վերջացրեց հետևեալ խօսքերով.

«Այժմ փառք փրկութեան Աստուծոյ, որուն արևը այցելեց մեզի. պատիւ Օսմանեան մեծ Հայրենիքին, որ իր ազատութեան դրօշը այնքան բարձր բռնեց և պսակներով պայծառացուց իր գլուխը. յարգանք այն նահատակներուն, որոնք ազատութեան համար մեռան, և անոնց, որոնք դեռ կապրին և որոնք պատճառ եղան, որ հանգիստ ապրինք ձեզմով և Աստուծոյ հովանիին տակ»։

Դուրեանի ճառից յետոյ խօսեց պ. Ե.

*) Տես «Մշակ» № 257.

պարակը: Ցուցարարներից մինը վիրաւորվեց թրից: Երեկոյեան ժամը 9-ին կարգ ու կանոնը վերահաստատված էր արդէն: («Հ. Գ.»)

—

Վիէննա, 18 նոյեմբերի

Տօկիօյի աւստրո-ունգարական դեսպանը թողնում է իր պաշտօնը: («Հ. Գ.»)

—

Պրագայում չեխերի ու գերմանացիների միջև ընդհատված ընդհարումները վերսկսվել են նոր ույժով: Երկու կողմից էլ մասնակցում են, գլխաւորապէս, ուսանողները: Կան թեթև վիրաւորվածներ. բազմաթիւ կալանաւորութիւններ են կատարվել: Կուռղներին հալածող ժանդարմների հասցէին, չեխերը բացագանչում էին. «Սպասեցէք, սերբերը մեր փոխարէն ձեզ կը հատուցանեն»:

—

Լոնդոնի «Բալկանեան կոմիտէտի» նախագահ Բեկստօվը Բէլգրադում եղած ժամանակ «Սերբիական ազգային կոմիտէտի» տրամադրութեան տակ է դրել 100,000 ֆր. որը հաւաքվել են նա և իր բարեկամները Անգլիայում: Վիէննայի լրագիրները զայրոյթով են խօսում այդ նուիրաբերութեան մասին:

—

«Matin»-ի Բէլգրադի թղթակիցը հաղորդում է գործերին լաւատեղեակ մի դիպլօմատի հետ ունեցած իր խօսակցութիւնը: Այդ դիպլօմատը ասել է, որ, իր կարծիքով, Աւստրիայի կողմից զինուորական ույժերի կենտրոնացումը սահմանագլխի վրա, մասնակի զօրակոչը, նոյնպէս և Վիէննայի թերթերի ռազմական լեզուն բացառապէս այն նպատակով է, որպէսզի ապաւորութիւն գործեն Պետերբուրգի ղեկավարող շրջանների վրա, որոնց ջղայնութիւնը ու թուլութիւնը բարօն Էրէնտալին շատ լաւ յայտնի է: Այդ ցոյցերը ուղղված են Ռուսաստանի դէմ և այն էլ հէնց այժմ ի նկատի առնելով բարօն Էրէնտալի և Իզվօլսկու մէջ շարունակվող բանակցութիւնները:

(«Рѣчь»)

—

Կ. Պօլիս, 17 նոյեմբերի

Պարլամենտի բացումը երիտասարդ թիւրքերի որոշման համաձայն պէտք է տեղի ունենայ դեկտեմբերի 14-ին:

Երէկ երեկոյեան մի խումբ մանիֆեստանտներ գնացել են ռուսաց դեսպանատունը: Ջինօվիեվի բացակայելու պատճառով, ցուցարարներին դիմաւորել է դրագոմանը, որին ներկայացողները յայտնել են իրանց շնորհակալութիւնը Ռուսաստանին՝ Թիւրքիայի վերաբերմամբ բռնած իր դիրքի համար: («Кс.»)

—

Կ. Պօլիս, 18 նոյեմբերի

Պետական խորհրդի նախագահ Թեվֆիկ-փաշան և ժողովրդական լուսաւորութեան մինիստր Էքրէմ-բէյը նշանակվեցին սենատորներ: («Հ. Գ.»)

—

Սօֆիա, 18 նոյեմբերի

Բօլգարական գործակալութիւնը հաղորդում է. «Վերջին ժամանակներս Կ. Պօլսի թերթերը մտացածին կերպով ֆանտաստիկ, անհիմն տեղեկութիւններ են հաղորդում, իբր թէ հալածանք է սկսվել Բօլգարիայում ապրող թիւրքերի դէմ: Այդ տեղեկութիւնները միանգամայն անհիմն և զրպարտիչ յերիւրանքներ են»: («Հ. Գ.»)

—

Վիլհէլմ կայսրը, ինչպէս յայտնի է, Բիւլօվի դիմումի համաձայն գրաւոր խոստումն է տուել այսուհետև այլ ևս հեռու մնալ ու չը խառնվել երկրի քաղաքականութեանը՝ առանց կանցլերի գիտութեան:

Բերլինի «Kreuzzeitung»-ը հաւաստացնում է, որ «Reichsanzeiger»-ում տպագրված է միայն այդ խօսումի մի մասը, և պնդում է, որ հասարակական հանգստութեան տեսակէտից անհրաժեշտ է հրատարակել նրան լիովին: («Б. В.»)

—

Բերլին, 18 նոյեմբերի

Րէյխստագ: Երկար վիճաբանութիւններից յետոյ մերժվեցին սօցիալ-դեմօկրատների առաջարկութիւնները. մէկը այն մասին, որ 8 կամ 9 ժամ բանուորական օր հաստատվի կանանց համար, միւսը այն մասին, որ կանանց պաշտպանութեան օրէնսգիծը տարածվի նաև 14—18 տարեկան անչափահաս բանուորների վրա: («Հ. Գ.»)

—

«Berl. Tageb.» լրագրի ասելով, գերմանական մի օդապարիկ, նոյեմբերի 8-ին, մի քանի մետր անցել էր ռուսական սահմանի վրա: Ռուսական սահմանագլխի պահականներից հրացանի գնդակներ արձակեցին դէպի օդապարիկը, որից յետոյ վերջինս իսկոյն բարձրացաւ օդի մէջ ու անցաւ գերմանական սահմանը: Յիշեալ թերթի ասելով, սահմանապահները կրակել են լրտեսներ կարծելով օդապարիկում եղողներին:

—

Բերլին, 18 նոյեմբերի

«Norddeutche Alg. Zeit.»-ը հրատարակել է 1909 թւի ելմտի նախագիծը: Ծախքերը հաշւված են 2,865,409,018 մարկ, սովորական բիւջէն 2,630,369,273 մարկ, արտակարգը—235,039,745: Հերթական ծախսը հաշւված է 2,232,525,038 մարկ, որից զօրքի վրա՝ 676,176,679, նաւատորմի վրա՝ 144,043,804 մարկ: Պետական պարտքը — 171,487,300, պետական պօստ և հեռագիր— 573,144,796: Արտակարգ բիւջէով ծախքերը կազմում են 1,650,010 մարկ, սովորականը—17,905,865: Պետական ամբողջ պարտքը առ 1-ն հոկտեմբերի 1908 թւի կազմում է 4,253,500,000 մարկ: («Հ. Գ.»)

—

Սօֆիա, 17 նոյեմբերի

Ազգային ժողովին ներկայացված է մի օրինագիծ՝ ընտրողական օրէնքը փոփոխութեան ենթարկելու նպատակով: Քաղաքային և համայնական ընտրութիւնների մէջ մտցվում է համեմատական սկզբունքը:

Իտալական վիրաւորված ուսանողներին Տրիէստում հանդիսաւոր հրապարակական ընդունելութիւն է ցոյց տրված: Ոստիկանութիւնը չէ միջամտել: («Кс.»)

—

Մօսկվա, 17 նոյեմբերի

Խարբինից հեռագրում են, որ չինացիների սկսած բօյկօտը եապօնական ապրանքների դէմ սպառնական չափեր է ստանում: Եապօնական ապրանքներ վաճառող երեք չինացիներին ժողովուրդը ենթարկել է ինքնադատաստանի, կտրելով նրանց ականջները: («Кс.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՒՍՏՐԻԱՅԻ ԳԱՂՏՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

—

Պետերբուրգ, 17 նոյեմբերի

«Россія» լրագիրը, քննելով այսօրվայ առաջնորդող յօդուածի մէջ արևմտաեւրոպական մամուլի զանազան օրգանների մէջ վերջերս երևցած տեղեկութիւնները ռուս-աւստրիական գաղտնի համաձայնութիւնների մասին, որոնք կնքվել են վերջին ռուս-թիւրքական պատերազմի սկզբնաւորութիւնից առաջ Րէյխշտադտում 1876 թւին և Պեշտում 1877 թ., վերաբերեալ, ի թիւս այլոց, բօսնիա-հերցեգօվինեան խնդրին, քննելով նոյնպէս իր ժամանակին հեռագրական գործակալութեան հաղորդած «N. Pest. Journal» լրագրի յօդուածը, որ, ըստ երևոյթին, գրված է Բերլինի կօնգրէսի բանակցութիւններին մասնակցող աւստրո-ունգարական մի դիպլօմատի ձեռքով,—հարկաւո՞ր է գտնում, «ի նկատի ունենալով Աւստրո-Ունգարիայից բղխող այդպիսի մերկացումները, որոնց նպատակը պարզ է», յիշեցնել, որ այդ իր ժամանակին ծածուկ համաձայնութիւնները վաղուց արդէն գաղտնիք չեն կազմում: Նրանց բովանդակութիւնը,—ասում է լրագիրը,— մանրամասն յիշված է Տատիշչէվի գրած Ալեքսանդր II կայսրի պատմութեան երկրորդ հատորի մէջ: Ապա կանգ առնելով 1876-ին Րէյխշտադտում կայացած ռուսաւստրիական գաղտնի համաձայնութիւնների իրողութեան ծագման պատմութեան վրա, ինչպէս և 1877 թ. սկզբին տեղի ունեցած Րէյխշտադտում գծագրված սկզբունքների ոչ յօգուտ Ռուսաստանի փոփոխութեան վրա, երբ բացայայտվեց անհրաժեշտութիւնը Ռուսաստանի զինուորեալ միջամտութեան հարաւային սլաւների՝ թիւրքերի դէմ մղած կռւի մէջ, երբ պարզվեց անպայման կարևորութիւնը՝ Ռուսաստանի համար ձեռք բերել Աւստրիայի «բարեկամական չէզոքութիւնը»,— «Россія» լրագիրը ցոյց է տալիս, թէ ապահովելու համար այդ չէզոքութիւնը, որ սահմանվել էր Բուդապեշտում 1877 թ. յունվարի 3/15-ին կնքված գաղտնի ռուսաւստրիական կօնվենցիայով, կնքվեց նաև մի ուրիշ քաղաքական կօնվենցիա, ռուսթիւրքական պատերազմի սկզբից միայն մի ամիս առաջ, Հարաւային Բեսսարաբիան Ռուսաստանի հետ, իսկ Բօսնիա և Հերցեգօվինան Աւստրիայի հետ միացնելու մասին, ի բաց առեալ Սերբիայի և Չերնօգօրիայի մէջ ընկած երկիրը: Այդ հողային աւելացումները, որ երկու պետութիւնները ձեռք էին բերել Պեշտի դաշնագրով, ընդունեցին յետոյ Բերլինի կօնգրէսում այն ձևը, որ միայն Ռուսաստանը վերջնականապէս միացրեց Բեսսարաբիան, իսկ Աւստրո-Ունգարիան միայն «կցեց» (անեկսիա) Բօսնիա-Հերցեգօվինան, «իրաւունք ունենալով սակայն զինուորական գարնիզօններ պահել Նօվօ-Բազարի սանջակում»: Այդ իրողութիւններին կցվում է այժմ, շնորհիւ աւստրիական հրապարակախօսների անզգուշապահութեան, մի նոր ցուցմունք: «N. Pes. Journal»-ի յօդուածի հեղինակի տեղեկութիւններով, Ռուսաստանը Բերլինի կօնգրէսի ժամանակ և նրանից յետոյ առանձնակի համաձայնութիւն կնքեց Աւստրո-Ունգարիայի հետ: Քանի որ գաղտնի ակտի բովանդակութիւնը,—շարունակում է «Россія»-ն,—յայտնված է, մենք կարծում ենք, որ հարկ է, բոլոր թիւրիմացութիւններից խուսափելու համար, վերականգնել նրա ճիշտ բովանդակութիւնը: Բերլինում յուլիսի 1/13-ին իշխան Գօրչակովի և ոչ կոմս Շուվալովի և Ուբրիի միջև, ինչպէս ասում է աւստրիական թերթը, և կոմս Անդրաշիի միջև, իբրօք, ստորագրվեց մի գաղտնի դեկլարացիա այս խմբագրութեամբ. «Ի նկատի ունենալով, որ աւստրո-ունգարական կառավարութիւնը հրաժարվեց ենթարկել կօնգրէսի քննութեանը Նօվօ-Բազարի սանջակում օսմանեան վարչութեան Աւստրո-Ունգարիայի անցման հարցը, համաձայն Բերլինի կօնգրէսի 1878 թ. յունիսի 22-ի № 8 նիստի արձանագրութեան որոշման, որպէսզի դրանով դիւրացվի համաձայնութիւնը երկու կառավարութիւնների մէջ, ռուսաց կայսերական կառավարութիւնը պարտաւորվում է իր կողմից ոչ մի առարկութիւն չանել, եթէ Նօվօ-Բազարի սանջակում օսմանեան վարչութիւնը պահելուց որևէ անյարմարութիւն ծագելիս՝ Աւստրո-Ունգարիան ստիպված լինի վերջնականապէս գրաւել այդ երկիրը, ինչպէս և Բօսնիայի և Հերցեգօվինայի մեծ մասը»: Ապա ասված է. «Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ աւստրո-ունգարական կառավարութիւնը աջակցութիւն ցոյց կը տայ ռուսաց կայսերական կառավարութեանը դիպլօմատիական հողի վրա, համաձայն իր վեհապետների ցանկութեան, որպէսզի առաջն առնվի այն դժուարութիւնների, որոնք կարող են ծագել կօնգրէսի վճիռները կատարելիս»:

«Россія»-ն եզրակացնում է. «Ինչ և լինի վերոյիշեալ ակտերի իսկական նշանակութիւնը, դա, ի հարկէ, չէ կարող ազդել բօսնիա-հերցեգօվինեան հարցի այժմեան կացութեան վրա: Ոչ մի առանձնակի դաշնագիր, նման 30 տարի առաջ կնքված ռուս-աւստրիական համաձայնութիւններին, չէ կարող փոխել այդ հարցի ընդհանուր եւրօպական բնաւորութիւնը: Այդպիսի հայեացքի կանօնաւորութիւնը հաստատվում է բոլոր մեծ պետութիւնների, դրանց թւում և Աւստրիայի, պրինցիպիական որոշմամբ, որոնք գումարվեցին 1871 թ. Լոնդոնի կօնֆերենցիայում, ռուսաց կառավարութեան յայտարարութեան առիթով փոխելու Պարիզի տրակտատի մի քանի յօդուածները, վերաբերեալ Սև ծովին: Այդ կօնֆերենցիայում ստորագրվեց մի առանձին արձանագրութիւն 1871 թ. յունվարի 17-ին, որով մեծ պետութիւնների լիազօրները ճանաչեցին իբրև «էական պրինցիպ ամեն մի միջազգային դաշնագրի պարտաւորութիւնը չը փոխել այդ որոշումները, առանց դաշնագիր կողմերի համաձայնութեան»: Ուստի Բօսնիայի և Հերցեգօվինայի իրաւական դրութ.ւնը, իբրև պաշտօնապէս որոշված ընդհանուր-եւրօպական համաձայնութեամբ Բերլինի կօնգրէսում, կարող է փոխվել միայն ընդհանուր-եւրօպական համաձայնութեամբ»:

(«Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

(Սեփ. թղթ.)

—

Էջմիածին, 10 նոյեմբերի

Դեռ հանգուցեալ կաթողիկոսի կենդանութեան ժամանակ մի քննութիւն էր կատարել Բենիկ վարդապետը, որով Յուսիկ արքեպիսկոպոսը ամբաստանութեան տակ էր գտնվում: Եւ ահա այժմ, երբ այդ արքեպիսկոպոսը սինօդի անդամ է, գործը վերստին ասպարէզ է գալիս և քննութեան է առնվում մի սինօդի կողմից, որի ամբողջ կազմը, բացի մի երկու անհասներից, ամբողջովին մի խմբի մարդիկ են և Սուրէնեան արքեպիսկոպոսի հաւատարիմ կողմնակիցներ: Արդ, հարց է ծագում, ինչու այդ մեծագլորդ գործը, որ այքան երկար ժամանակ դատապարտելի կերպով քնեցնում և մահուցի տակ էին թաքցնում, յանկարծ անսպասելի կերպով հանդէս է բերվում հէնց նոյն անձերի կողմից, որոնք անշուշտ Յուսիկ արքեպիսկոպոսի ջերմ պաշտպաններն են: Եւ վերջապէս ինչ հիման վրա հայր տեղակալը առաջարկել էր բարձրագոյն իշխանութեանն ի հաստատութիւն սինօդի անդամութեան համար մի արքեպիսկոպոսի, որը այդպիսի մի ծանր ամբաստանութեան տակ է գտնվում այսքան ժամանակ: Սպասենք սինօդի այդ ձեռնարկած վերաքննութեան գործին և այն ժամանակ բացայայտ կը լինի, թէ յիրաւի «շան գլուխը որտեղ է թաղված»:

Խօսելով Քիշինևի և հոգևոր թեմի գործերի քննութեան մասին՝ ակամայից յիշեցի Բենիկ վարդապետին, որը, ինչպէս յայտնի է ընթերցողներին, սինօդի կողմից տեղակալի առաջարկութեամբ ահա քանի ամիս է, որ նշանակված է ընդհանուր և մշտական քննիչ բոլոր թեմական գործերի: Այդ պաշտօնի համար հայր Բենիկը ստանում է 100 րուբլի ամսական և անհրաժեշտ ճանապարհածախք: Եւ յիշեալ չաղ գումարը Բենիկ վարդապետը ստանում է այն ժամանակ, երբ նա իր կլասիքական դարձած զեկուցագրով յարձակվում է Գէորգեան ճեմարանի վարչութեան վրա, որ ուսուցիչներին իբր թէ շատ ու աւելորդ ռոճիկներ են ստանում իրանց դասերի համար վանքի ներկայ նիւթական սոսկալի ճգնաժամում: Բայց նոյն Բենիկը՝ այդ լիազօր քննիչը, որ իր պաշտօնով յիշեցնում է «контролеръ спальныхъ вагоновъ», ահա մի ամիս է, առօր-փառօր նստած է Էջմիածնում և հանգիստ սրտով ստանում է իր ամսական 100 րուբլին: Էլ չենք ասում թէ որքան բողոքներ ու անբաւականութիւններ կան, որ այդպիսի մի պատասխանատու և անչափ գործավարութեան համար այդ տեսակ մի նոր պաշտօն են ստեղծել յանձին Բենիկ վարդապետի:

Սակայն այդ բոլոր փաստերը նսեմանում են մի ուշագրաւ ու բնորոշ դէպքի առաջ, որ այս օրերս տեղի ունեցաւ, մի դէպք, որի պատմութիւնը յիշեցնում է միջնադարեան ինկվիզիցիայի օրերը, առւ-դօ-դաֆէների բոցերը:

Սուրէնեան եպիսկոպոսը հրամայել է անմիջապէս գրաւել «Արարատի» հոկտեմբեր ամսվայ համարը Երուանդ վարդապետի մի յօդուածի պատճառով և, օգտվելով հանգամանքից, արձակում է նաև խմբագրութեան պաշտօնից Գարեգին վարդապետին, որը այնքան գլխացաւանք էր պատճառել «Մշակի» էջերում իր նամակներով պրօֆ. Մառի պատմութեամբ Թանգարանի վերաբերմամբ: Երուանդ վարդապետի յօդուածը, որ այդքան զայրոյթ է առաջացրել Սուրէնեան տեղակալի և սրան շրջապատող խորհրդատուների մէջ, ըստ բովանդակութեան մի անմեղ բան է, ուր շօշափվում է հայ եկեղեցու ծխական տարրութիւնների ու կրօնական պաշտօնների արմատական րէֆօրմի անհրաժեշտութիւնը. մի հարց, որ տասնեակ տարիներ ծեծվել է հայ մամուլի էջերում և հասարակութեան բոլոր խաւերում: Այժմ տեղակալի հրամանով կտրատում և հանում են «Արարատից» վերոյիշեալ յօդուածը, որպէսզի այրեն, ոչնչացնեն, մի խօսքով առւ-դօ-դաֆէի ենթարկեն: Եւ, ով զարմանք, վանքի Տարտիւֆները, ազատամիտ գիտնական սևագլուխները, թայֆայական հրճուանքով ծափ են զարնում և խրախուսում իրանց ձեռքին խաղալիք դարձած տեղակալին: Սա մի հէքիաթ, անեկդօտ չէ, ընթերցող, այլ մի փաստ, որ կատարվում է XX դարում:

Նիմանդ

—

Վաղարշապատ, 17 նոյեմբերի

«Մշակի» ընթերցողներին յայտնի է, որ Վաղարշապատում մտադրութիւն կար հիւանդանոց հիմնել, որի առիթով և մի քանի անգամ խորհրդակցական ժողովներ տեղի ունեցան: Հարկաւոր նախահաշիւը կազմելուց յետոյ՝ յանձնարարվեց Վաղարշապատի հասարակութեան տանուտէրին, որպէսզի վերջինս ընդհանուր-հասարակական ժողով գումարի, որ կարելի լինէր օրինաւոր համախօսականով մի մարմին ընտրել, որը բանակցութեան մէջ մտնէր Վաղարշապատի շրջակայ գիւղացիների հետ, հիւանդանոցի հարցը առաջ տանելու նկատառմամբ:

Տանուտէրը ժողով գումարեց, որին ներկայ էին միայն մի քանի մարդիկ (տանուտէրի լօգիկայով՝ կողմնակի մարդիկ իրաւունք չունէին ներկայ լինելու ժողովին, մինչդեռ հասարակական էր կոչվում): Այդ մի քանի անձնաւորութիւններից բաղկացած ժողովը ընտրեց մի այնպիսի մարդկանցից կազմված յանձնաժողով, որ մինչև օրս ոչինչ չէ արել:

Դատապարտութեան արժանի է Վաղարշապատի ինտելիգենցիան, որ այդ լուրջ հարցը տանուտէրի վզին փաթաթելուց յետոյ՝ այլևս չը հետաքրքրվեց նրանով:

Արդեօք յանձնաժողովը չի բարեհաճի հաշիւ տալ, թէ ինչ է արել մինչև այժմ, և ինչն է գլխաւոր պատճառը, որ լուռ է մնացել:

Թունիկ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

—

Պետերբուրգ, 17 նոյեմբերի

Տասնվեցերորդ նիստը բացվում է ժամը 11 և 12 րօպէին: Նախագահում է իշխան Վօլկօնսկին: Կարդացվում է օրակարգը:

Հերթին դրված է 31 անդամների առաջարկագիրը բանւորական հարցով զբաղվող մասնաժողովը վերակազմելու մասին:

Վօրօնկօվը անհրաժեշտ է համարում նոր մասնաժողով ընտրել, որովհետև՝ բանւորական մասնաժողովի նախագահը յայտնեց, որ այդ մասնաժողովը իր ընդգծած ճանապարհից չի շեղվի, իսկ այդ ճանապարհը տրամագծօրէն հակառակ է Դումայի մեծամասնութեան ցանկութիւններին, որը ցայտուն կերպով երևաց անցեալ նիստերից մինում, երբ Դումայի մեծամասնութիւնը չը համաձայնեց մասնաժողովի այն եզրակացութեան հետ, որ հարկաւոր է սոսկ ձևական պատճառով մերժել հաշմանդամ և աշխատանքի ընդունակութիւնը կորցրած բանւորներին վարձատրելու ֆինանսների մինիստրութեան օրինագիծը:

Պետրօվ 3-րդը միանում է Վօրօնկօվի ասածներին:

Վօրօնինը յայտնում է, որ սօցիալ-դեմօկրատները չեն կարող մասնակցել բանւորական մասնաժողովի ընտրութեանը, քանի որ ինչպէս խնձորենիից խնձոր և եղևնիից կոն, այնպէս և Դումայի մեծամասնութիւնից, քանի անգամ էլ որ բանւորական մասնաժողով ընտրվի, հետևանքը կը ստացվի միշտ միևնոյնը—բանւորական հարցի մասնաժողովը կը լինի հակաբանւորական մասնաժողով:

Եգօրօվը կանգնած է Վօրօնինի տեսակէտի վրա և ժողովրդական ազատութեան ֆրակցիային է թողնում՝ ինքնազգաստացման բերել Դումայի մեծամասնութեան, իսկ սօցիալ-դեմօկրատները չեն հաւատում այդ մեծամասնութեան սոխակի երգերին:

Տիմօշկինը դէմ է մասնաժողովի վերընտրութեանը, որը կարող է միայն դանդաղեցնել օրինագծի քննութիւնը:

Սինատինօն հասկանում է սօցիալ-դեմօկրատների դժգոհութիւնը. չէ՞ որ ո՛չ նախագահը, ոչ մեծամասնութիւնը, ո՛չ էլ բանւորական մասնաժողովի զեկուցանողները չեն ընդունում սօցիալ-դեմօկրատական հայեացքները, չափաւոր-աջակողմեանները հարկ չեն տեսնում նոր մասնաժողով ընտրել:

Ֆօն-Անրէպը Դումայի ուշադրութիւնը

Ակնունի՝ յանուն Դաշնակցութեան:

Հետաքրքրութիւնից զուրկ չէր լինի, կարծում ենք, առաջ բերել և պ. Ակնունու ճառը.

«Սրբազան հայր.

«Յարգանքի և բերկրութեան մի զգացմունքով է, որ այս եկեղեցում և հայ ժողովրդի առաջ պիտի շնորհաւորեմ ձեր դարձը դէպի գահը. յարգանք այն պատճառով, որ, երբ անդամ Հ. Յ. Դաշնակցութեան, ես իմ ընկերների հետ տածել եմ մի մեծ երախտագիտութիւն այն գործունէութեան համար, որ դուք ունեցաք Թիւրքահայաստանում, բերկրութիւն՝ որովհետև այդ դարձը Երուսաղէմից Պօլիս և Սկիւտարից դէպի պատրիարքարան ուրիշ բան չէ, եթէ ոչ ազատութեան մի նոր ակտ մի այնպիսի երկրում, ուր երեսուն տարի շարունակ բռնակալութիւնը ճնշող էր և որի հետևանքով էլ տեղի ունեցաւ ձեր աքսորը:

«Երկու ամիս առաջ, երբ մեր թիւրք հայրենակիցների հետ միասին պատիւ ունեցանք ողջունելու ձեր դարձը, մենք լեցված էինք մի մեծ յոյսով, թէ ազատութեան այս նոր շարժումը տևական պիտի լինի: Այժմ սակայն մեր յոյսերը բեկանվելու մօտ են, և մենք գտնվում ենք տագնապալի վիճակում, որովհետև բռնակալութիւնը դեռ բոլորովին չէ ոչնչացած:

«Մեր բոլորի պարտականութիւնն է մեր բոլոր ույժով կռւել բռնակալութեան դէմ:

«Ես այս բոլոր ճառերից յետոյ միայն մի յայտարարութիւն ունեմ անելու իմ ընկերների կողմից: Ձեր գործունէութեան ընթացքում, լինի այստեղ թէ Էջմիածնում, դուք կունենաք թախիծի և վտանգի պահեր: Այն Էջմիածինը, ուր դուք պիտի կոչվէք, համոզված եմ դրան, պիտի գտնէք մի վանք, բոլորովին աւերված, մի հոգևորականութիւն՝ ներշնչված ինտրիգներով և ագիտութեամբ, մի վարչութիւն, որ թէև արտաքին ձևով սահմանադրական, բայց հոգով հակասահմանադրական է: Ահա այս պայմաններում է, որ պիտի գնաք գործել Էջմիածնում:

«Ի՞նչ կարող է անել ձեզ մի կազմակերպութիւն, որի համոզումները տարբեր են ձեր համոզումներից: Հ. Յ. Դաշնակցութիւնը չը պիտի խառնվի կաթողիկոսութեան և պատրիարքութեան գործերին, բայց ամեն անգամ, որ դուք կը գտնվէք ծանր պայմաններում, միշտ ձեզ օժանդակ պիտի ունենաք մեզ:

«Ահա այս յայտարարութեամբ է որ վերջացնում եմ խօսքս, վստահ՝ թէ Իզմիրլեան անունի հետ կապված արդարութեան ձայնը տևական պիտի լինի թէ այստեղ և թէ Էջմիածնում:

«Կեցցէ ուրեմն Իզմիրլեան պատրիարքը»:

Հանդէսը վերջացել էր և Իզմիրլեան ուղղվում էր արդէն դէպի Պատրիարքարան, երբ բեմ բարձրացաւ ոստիկանական քննիչ Մէհմէդ Էմին բէյ, որը եկաւ երկու հետևորդներով վերջին րօպէին, պ. Ակնունու բանախօսութեան միջոցին:

Թիւրք հազարապետը, մի այնպիսի սուր ձայնով, որ արձագանք էր գտնում ընդարձակ եկեղեցու ամենախուլ անկիւններում անգամ, գովեց հայ ժողովրդին, իբրև հաւատարիմ հպատակ թիւրք պետութեան, և յորդորեց միշտ շարունակ հաւատարիմ մնալ սահմանադրական պետութեան մէջ էլ ժողովուրդները «հպատակ» են, փոխանակ քաղաքացու: Այնուհետև շնորհաւորեց պատրիարքին՝ ընտրութեան համար:

Իզմիրլեան, որ յետ էր դարձել լսելու համար հռետորի ճառը, բանախօսութիւնից յետոյ շնորհակալութիւն յայտնեց Էմին բէյին:

Մոռացայ ասելու, որ այս բոլոր արարողութեան ներկայ էին նաև յոյն հոգևորականներ, յունաց պատրիարքի կողմից:

Իզմիրլեան, շրջապատված հոգևորական դասով, Մայր-եկեղեցուց դուրս ելաւ և մտաւ Պատրիարքարան, ուր նրան շնորհաւորեցին պաշտօնական և անպաշտօն հիմնարկութիւնների ներկայացուցիչներ:

Ցատկապէս շնորհաւորելու եկան նաև «Միութեան և յառաջդիմութիւն կոմիտէի» ներկայացուցիչները, յայտնի հերոս Նիազի բէյի եղբօր հետ:

Դուրսը անձրևը թափվում էր հեղեղի նման: Հասարակութիւնը, կեցցէներից և ծափերից յոգնած, ցրվեց, ինքն իրան հարց տալով թէ արդեօք նորընտիր պատրիարքը պիտի հրաւիրվի՞ կայսերական Պալատ, ինչպէս հին ռէժիմի տակ:

Arago

հրաւիրում է հետևեալ սկզբունքային հարցի վրայ.—կարելի՞ բան է, արդեօք, այն ժամանակ, երբ որևէ մասնաժողով կատարում է Դումայի հերթական յանձնարարութիւնը և դեռ չէ վերջացրել այդ, հարց զարթեցնել՝ թէ այդ մասնաժողովը աշխատում է ոչ այն ուղղութեամբ, որպիսին ցոյց է տուել Դուման։ Դա մի պրեցեդէնտ է, որ չափազանց վտանգաւոր է Դումայի ապագայ գործունէութեան համար. (ծափահարութիւն կենտրոնում)։

Սուչկովը, իբրև բանւորական մասնաժողովի անդամ, մատնանշում է այն պատճառները, որոնք ազդեցին մասնաժողովի աշխատանքների դանդաղելու վրայ։

Վորոնկովը մասնաժողովը վերընտրելու դէմ արված բոլոր առարկութիւնները ընդհանուր ֆրազներ է համարում։

Այլևս խօսողներ չը կան։ Ձայների ակներև մեծամասնութեամբ նոր մասնաժողով ընտրելու առաջարկութիւնը մերժվում է։

Հերթին դրված է ագրարային օրինագիծը։

Կոժեմիակովը և Օստրօգորսկին հրաժարվում են խօսելուց։

Խասմամէդովը, մատնանիշ անելով որ Դումայի մեծամասնութիւնը ճնշում է գործ դնում փոքրամասնութեան վրայ, յայտնում է, որ մահմէդական ֆրակցիան ձայն կը տայ յօդուածային քննութեան անցնելու դէմ, որովհետև նոյեմբերի 9-ի օրէնքը, որ հրատարակվել է քաղաքական նպատակներով յանուն հողատէրերի շահերի, սոսկ կը դժուարացնէ ագրարային հարցի լուծումը։

Լէոնը կարծում է, որ համայնական տիրապետութիւնը պահելու կամ չը պահելու հարցը պէտք է վճռեն իրանք գիւղացիները։

Ապա հանդէս են գալիս մի շարք ուրիշ հռետորներ, որոնց մի մասը պաշտպանում է նոյեմբերի 9-ի օրէնքը, մի մասը բացասում է նրան։

Իշխան Վոլկոնսկի 1-ինը, Վետչինինը, Կապուստինը, Շինգարևը և Միլիւկովը հրաժարվում են խօսքից։

Սազոնովը նկատում է, որ սօցիալ-դեմօկրատների համակրելի առաջարկութիւնը, գրաւել բոլոր մասնաւոր տիրապետական հողերը յօգուտ գիւղացիութեան, թէև մի հսկայական բարեգործական ակտ կը լինէր, սակայն ընդունելի կը լինէր այն դէպքում, եթէ հողերի այդպիսի բաշխումը նախատեսված չը լինէր բոլոր քաղաքակիրթ պետութիւնների քրէական կօդէկսներով։

«Աւելի վատթար է կադէտների պօկարինան ստիպողական գրաւման մասին. դա մի օրինական յափշտակութիւն է, այն վառվող ջահն է, որի մասին խօսում էր Միլիւկովը և որ ուզում են գցել Ռուսաստան այն յուսով, թէ նորից կենէ ժողովուրդը, նորից տեղի կունենան այնպիսի երևոյթներ, որոնք մեզ յետ կը դարձնեն դէպի բարբարոսութիւն (ձայներ՝ բրաւօ)։ Դուք կարծում էք, որ մենք չենք կարող խուսափել ստիպողական գրաւումից. բայց Աստուած տայ, որ այդ մաքի պաշտպանները ազատվեն ժողովրդի դատաստանից, պատմութեան դատաստանից» (ծափահարութիւններ կենտրոնից և աջակողմից)։

Գոլիցեվ քահանան աշխատաւոր գիւղացիութեան և սոված Ռուսաստանի շահերի համար պահանջում է ընդունել նոյեմբերի 9-ի օրէնքը։

Պրէդկալնը յայտնում է, որ սօցիալ-դեմօկրատական ֆրակցիան 90 միլիօն գիւղացիներին վերաբերվող նոյեմբերի 9-ի օրէնքի մեծ կարևորութեան նկատմամբ անթոյլատրելի է համարում ճառախօսների խօսելու տաս րօպէաչափ միջոցի սահմանափակումն և ուստի հրաժարվում է յետագայ վիճաբանութիւններին մասնակցելուց (ծափահարութիւններ աջակողմից)։

Ամօսէնովը Վիտէբսկի գիւղացիների անունից շնորհակալութիւն է յայտնում նոյեմբերի 9-ի օրէնքը մտցնելու ինիցիատիվի համար։ Նոյեմբերի 9-ի օրէնքի դէմ ձայն տուողները այնպէս կը վարվեն, ինչպէս խոտի վրայ պառկած շունը, որը ոչ ինքն է ուտում և ոչ էլ տալիս է ձիուն ուտել (ծափահարութիւններ աջակողմից)։

Խարլամովը խօսելուց հրաժարվում է։

Համայնքի կողմնակից Սաղաթէլեանը նոյեմբերի 9-ի օրէնքի մէջ տեսնում է սոսկալի վտանգ ապագայ սերունդների համար։

Ժամը 4-ին ընդմիջում յայտարարվեց։

—

Նիստը վերսկսվում է 4 ժամ 45 րօպէին։ Նախագահում է Խոմեակովը։ Հայդարովը և կոմս Բոբրինսկի 2-րդը հրաժարվում են խօսքից։ Նովիցկի 2-դը շեշտում է լեհերի յայտարարութեան առանձին կարևորութիւնը յօդուածային քննութեան անցնելու մասին, որովհետև լեհերը գործնականապէս ուսումնասիրել են հողերի հատատման առաւելութիւնները։ Նոյեմբերի 9-ին օրէնքի երևալը ճառախօսը կապակցում է գիւղացիական բանկի և տեղափոխութեան ռէֆօրմների հետ։ Պետրով 2-րդը, Կուզմինսկի քահանան և Լուչինը հրաժարվում են խօսքից։ Ճառախօսների սկզբնական ցուցակագրումն աւարտվեց։ Մնաց լսել մինչ այդ հերթը հասած միջոցին բացակայ եղած Դումայի անդամներին։ Գէպեցկի քահանան, Պոլէտաևը և եպիսկոպոս Եւլօգին բացակայ են։ Բէլօգուրովը գտնում է, որ նոյեմբերի 9-ի օրէնքը, տեղափոխութեան և գիւղացիական բանկի ռէֆօրմային կապակցելով, աւելի կը լայնացնէ գիւղացիների հողից օգտվելու հնարաւորութիւնը։ Այժմ քաղաքական բոլոր կուսակցութիւնները իրանց բարեկամներ են հրատարակում գիւղացիներին, բայց մէջէ սրանց իսկական բարեկամներ են համարվում նրանք, ովքեր ասում են նրանց. «Մենք ձեզ կը տանք այն ամենը, ինչ որ մերը չէ, իսկ դուք մեզ տուեցէք գահ» (ծափահարութիւններ աջակողմից)։ Բայց արդեօք իսկական-ռուս մարդկանցից ո՞րը իր ամենասուրբ գահը կը տայ այլահաւատների և այլացեղերի իշխանութեանը։ Մէջէ համայն աշխարհի միացեալ հրէաները յաղթող կը հանդիսանան արժատական ռուս ազգաբնակութեան վրայ հաւասարութեան դէպքումն էլ (աղմուկ)։

Նախագահը ընդհատում է ճառախօսին, խնդրելով չը խօսել հրէաների հաւասար իրաւունքի մասին։

—

Անձնական հարցի պատճառով Միլիւկովը հակաճառում է Սազօնովին և կոմս Բոբրինսկի 1-ինին, ցոյց տալով որ նոյեմբերի 9-ի օրէնքը քննելիս ոչ ինքը, ոչ էլ կադէտները չեն պաշտպանել համայնքին։ Նրանք միայն դէմ են խօսել նոյեմբերի 9-ի օրէնքին։

Կարդացվում է հետևեալ օրվայ ժողովի ցուցակը։

Նախագահը քուէարկութեան է դնում չորեքշաբթի երեկոյեան ժողով նշանակելու հարցը մի քանի հարցապնդումներ քննելու համար։ Առաջարկը ընդունվում է։ Ժողովը փակվում է ժամը 6 և 20 րօպէին։

Դումայի անդամներին դատի ենթարկող մասնաժողովը ձայների մեծամասնութեամբ որոշվեց Դումայի անդամ Կոսորոտովին հեռացած համարել Դումայի կազմից։

(«Հ. Գ.»)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Նոյեմբերի 18-ին և երէկ՝ 19-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում, Դուչէթի պետական գանձատան կողոպման գործի առիթով սկսվեց վկաների հարցաքննութիւնը։

—

Անցեալ ամառ «Тифлисскiй Листокъ» թերթի խմբագրատանը գրաշար Անտօն Կօստեցկինը սպանեց իր ընկեր գրաշար Արսէն Մուշէղեանին։

Նոյեմբերի 18-ին այս գործը քննվեց Թիֆլիսի նահանգական դատարանում։ Մեղադրեալին պաշտպանում էր երդ.-հաւատարմատար Ջմշկեանը։

Դատարանը Կօստեցկինին դատապարտեց երեք տարով բանտարկութեան, զրկելով նրան բոլոր իրաւունքներից։

ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Բժշկապետ Ց. Գասպարեանից ստացանք Զէյթունի սովեալների օգտին 100 րուբլի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ Ա. Ս. Մատինեանը քաղաքագլուխ իշխ. Ջերբեզովին Նիցցայից կնքված ծրարով ուղարկել է իր կտակը, խնդրելով պահել քաղաքային գանձարկղի մէջ և բանալ միայն նրա մահվանից յետոյ։

✦ Թիֆլիսի հասարակական կլուբը, ինչպէս յայտնի է, փակվեց սրանից երկու ամիս առաջ այն պատճառով, որ նրա մէջ Բուկշտէյնը կարդաց մի դասախօսութիւն մահվան պատժի մասին։ Ներկայումս նահանգական ատեանը գտել է, որ կլուբի կանոնադրութեան խախտումն է տեղի ունեցել, բայց ոչ չարամտութեամբ է արված այդ, ուստի և թոյլատրում է բանալ վերստին։

✦ Թիֆլիսի նահանգապետի դիւանատունը դիմել է բոլոր գաւառապետներին, առաջարկելով միջոցներ ձեռք առնել, որպէսզի շինական հասարակութիւնները իր ժամանակին վճարեն պետական գանձարանին շինական դպրոցների պահպանութեան ծախքերը։

✦ Այսօր, երեկոյեան ժամը 7-ին, կովկասագիտական բարձր դասընթացքներում, Միւնխէնի համալսարանի դոկտոր Ադոլֆ Դիրր կը կարդայ իր 8-րդ դասախօսութիւնը կովկասեան լեզուների մասին։

✦ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է Թիֆլիսում բանալ աշխատանքի բորսա։

✦ Մօտ օրերս տեղի ունեցաւ քաղաքային վարչութեան և հրաւիրված հաշւապահների միացեալ խորհրդակցութիւնը այն մասին, թէ ինչ կերպ ցանկալի է քաղաքային վարչութեան հաշւապահական մասը աւելի կանոնաւոր հիմքերի վրայ դնել։ Խորհրդակցութիւնը ցանկալի համարեց սովորական հաշւապահութեան հետ զուգընթաց վարել և իտալական սիստեմով կրկնակի հաշւապահութիւն, որի համար անհրաժեշտ է քաղաքային ինվէնտարի ցուցակ կազմել։ Այս սիստեմը խորհրդակցութիւնը որոշեց մտցնել 1910 թւից։

✦ Թիֆլիսի քաղաքային ինժեներ Կօզնովիցկին կազմել է այն պայմանները, որոնց հիման վրայ կապալով են տրվելու Թիֆլիսում գազային գործարան հիմնելու աշխատանքները։ Այդ պայմանները հրատարակվելու են մօտիկ ապագայում։

✦ Թիֆլիսի քաղաքային հաստատութիւններից ամեն մէկը, ինչպէս արհեստաւորաց դպրոցը, հոգեկան հիւանդների ապաստարանը, սուր վարակիչ հիւանդանոցը, Ալէքսանդրովսկի հիւանդանոցը, ծննդաբերական ապաստարանը, տնանկների տունը և այլն, առանձին է տանում իր տնտեսութիւնը, մթերքները գնելով միմեանցից և այդպիսով ահագին ծախքեր անելով։ Քաղաքային վարչութեան և այդ հաստատութիւնների կառավարիչների միացեալ ժողովում տնտեսելու նպատակով որոշվեց այդ հաստատութիւնների համար միս մատակարարելու գործը յանձնել խոշոր մատակարարներից մէկին, իսկ մթերքների մատակարարութիւնը մի խոշոր առևտրականի։

✦ Ջրի և էժանագին ճաշարանների ընկերութեան վարչութիւնը խնդրամատոյց է եղել քաղաքային վարչութեանը՝ աւելացնելու քաղաքային միջոցներից ընկերութեան ստացած 600 րուբլի նպաստը, պատճառաբանելով որ մթերքները թանգացել են։

✦ Վրաց թեմական դպրոցական խորհուրդը մտադրութիւն ունի շուտով հրատարակել նոր գիրք՝ «Անդրկովկասի եկեղեցա-ծխական դպրոցների պատմութիւնը վերջին 25 տարիների ընթացքում»։

✦ Վրացերէն լեզուով թարգմանված է և շուտով լոյս կը տեսնի Փուլտի «Дуракъ» պիէսը։

✦ «Зак. Обозр.» լսել է, որ Քութայիսի նահանգապետի կարգադրութեամբ մօտ օրերս բանտից արձակելու են վրացի գրող կին Նինա Նակաշիձէին։

✦ Նոյեմբերի 18-ից Թիֆլիսում լոյս է տեսնում վրացերէն լեզուով նոր օրաթերթ «Դրօէբա» (Ժամանակ) անունով, Իվ. Սօղիաշվիլու խմբագրութեամբ։

✦ Թիֆլիսի ստուգիչ ատեանը (провѣрочная палатка) առաջարկել է քաղաքային վարչութեանը կարգադրել, որ նաւթը գնողներին տրվի կշռով, որի պատճառով ամանները պէտք է փոխարինել կշեռքով։

✦ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը մանր առևտրականների համար յատկացրել է նոր տեղ ֆունիկուլեօրի ստորը 2-րդ քաղաքամասում։

✦ Կարսի երկաթուղագծի վրայ, սկսած Ջաջուռ կայարանից, նոյեմբերի 18-ի առաւօտվանից սկսվել է սաստիկ փոթորիկ, որի պատճառով Ալէքսանդրոպօլից դուրս եկած № 8 մարդատար գնացքը կանգ է առել 190-դ վերստի վրայ։ Գնացքը վերադառնում է Ջաջուռ երկու շոգեմեքենայով։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Նոյեմբերի 18-ին ձերբակալեցին Իվան Մատիաշվիլուն, որ մեղադրվում է Մկրտիչ Տէր-Կարապետեանի պահեստից 1205 րուբլու ցորեն գողանալու մէջ։

✦ Նոյեմբերի 18-ին, երեկոյեան ժամը 5-ին, Կախէտինսկայա փողոցում, № 41 տանը, իր սեփական գինետան մէջ սղնախեցի Գէորգ Փաւստովը, հարբած ժամանակ, վէճի բռնվելով իր հօր հետ, թեթև վէրք հասցրեց նրան դանակով փորից։ Վիրաւորվածին տարան հիւանդանոց, ուր բժշկական օգնութիւն հասցնելուց յետոյ նրան արձակեցին։

✦ Թիֆլիսի գեն.-նահանգապետի կարգադրութեամբ Փորու գաւառի բնակիչ Գրիգորիյ Գօգիչեվը զէնքի կանոնները խախտելու համար ենթարկվում է բանտարկութեան 3 ամսով։

✦ Նոյն կարգադրութեամբ, Դեմենտի, Նիկօլա, Լուկա, Վասիլիյ և Լէվան Կօջաէվները և Լուկա Պատարաեան, իբրև վնասակար անձեր, աքսորվում են գեն.-նահանգապետութեան սահմաններից։

ԲԱՔՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

✦ Խ. Գ. Սարգսեանին թոյլատրված է Բագու քաղաքում հրատարակել ռուսերէն ամենօրեայ մի թերթ, շաբաթօրեայ պատկերազարդ յաւելուածով, «Вѣстникъ Баку» անունով։

✦ Նոյեմբերի 13-ին Սև քաղաքի ոստիկանատուն են գնացել գործակատարներ Պօղոս Բարայեանց և Մելիք-Ղևոնդեանց և յայտնել, որ նոյեմբերի 12-ին, երեկոյեան ժամը 8-ին, Սև քաղաքից 2 և կէս վերստ հեռու գտնվող Քեշլիում, Սողոմոն Պօղոսովի գինետանն են մտել 5 զինված հայեր ու պահանջել նրանցից փող տալ յօգուտ ինչ-որ կազմակերպութեան։ Մերժումն ստանալով անծանօթներից 2-ը կրակել են Բարայեանցի դէմ։ Երբ վերջինս էլ պատասխանում է գնդակներով, մուտքի առջև կանգնած 3 ընկերները բացում են անկարգ գնդակաձգութիւն, որը բարեբախտաբար ոչ ոքի վնաս չէ տալիս։ Անծանօթները դիմադրութեան հանդիպելով անմիջապէս անյայտանում են։

(«Б. Э.» և «Кс.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Վերջին ժամանակներս, «Б. В.» լրագրի ասելով, Կուրսկի նահանգի գիւղերում եռանդով կազմակերպվում են ինքնօգնութեան խմբակներ, ընկերութեամբ բերել են տալիս գիւղատնտեսական զանազան գործիքներ, և որ գլխաւորն է՝ գիւղացիները ագահութեամբ ձեռքից ձեռք են անցնում, կարդում լրագիրներն ու թերթերը։ Այդ բանը, ի հարկէ, դուր չէր կարող գալ «հայրենիքի փրկիչներին», և նրանք սկսել են արդէն միջոցներ ձեռք առնել, որպէսզի «կրամօլա» տարածող առաջադիմական թերթերը մուտք չը գործեն գիւղացիների շրջանը։ Ընդհակառակը նրանք ամեն ջանք գործ են դնում սև-հարիւրեակային թերթերով հեղեղելու գիւղերը. ամբողջ հակերով այդ լրագիրներից ուղարկում են գիւղացիներին ձրի, սակայն գիւղացիները կարդալու փոխարէն այրում են նրանց։

✦ Օդեսսայից նոյեմբերի 8-ին հեռագրում են «Рѣчь» լրագրին, որ մօտ ժամանակներս «Одесск. Нов.»-ի խմբագրութեանը նախազգուշացրին, որ վարձկան սրիկաների մի խումբ վճռել է ծեծել թերթի աշխատակիցներից մի քանիսին. ապա քիչ ժամանակից յետոյ փորձ եղաւ ծեծելու թերթի աշխատակից բժիշկ Ցէնօվսկուն, բայց անյաջող։ Երէկ քաղաքային թատրոնի ֆօյէում, անտրակտի միջոցին, չորս հոգուց բաղկացած մի խումբ յարձակվեց «Одесск Нов.» լրագրի խմբագիր Գերցօ-Վինօգրադովի վրայ և ծանր կերպով ծեծեց նրան։ Վրայ հասնող թատրոնական գործիչները, ժուռնալիստները հազիւ կարողացան խլել նրան ծեծողների ձեռքից, իսկ ոստիկանապետի օգնականը կարողացաւ կալանաւորել երկուսին միայն, որոնցից մէկը սև-հարիւրեակային «Одесс. Резина» թերթի խմբագիր Գլօբաչեւն է, իսկ միւսը՝ նրա աշխատակից Ժուկովսկին։ Գիշերը ուշ Գլօբաչեվը տելէֆօնով սպառնացել է «Одесск. Нов.»-ի խմբագրութեանը հրամայելով չը յիշել լրագրում որ ինքն էլ մասնակցել է Գերցօ-Վինօգրադովի ծեծելուն։

✦ Օդեսսայից նոյեմբերի 12-ին հեռագրում են «Рѣчь» լրագրին, որ այնտեղ «ռուս ժողովրդի միութեան» և «ռուս մարդկանց միութեան» միջև տարաձայնութիւններ են ծագել միութեան բանւորական արտէլների կազմակերպութեան գործում իրար հետ մրցելու համար։ Ռուս ժողովրդի միութիւնը գանգատվում է, որ ռուս մարդկանց միութիւնը ձգտում է նրա արտէլները փոխարինել իւրայիններով։

Ռուս մարդկանց միութեան նախագահը մօտ օրերս իր շուրջը հաւաքելով մի խումբ բանւորներ, գլխաւորապէս ռուս ժողովրդի միութեան արտէլներից՝ իրանց վատ վարքի համար արտաքսվածներից, շրջում էր նաւահանգստում և գործատէրերին առաջարկում իր արտէլի ծառայութիւնը պակաս գներով, եթէ որ նրանք հեռացնեն ռուս ժողովրդի միութեան մարդկանց։

✦ Պետերբուրգում գտնվող կոմս Կօնօվիցինին յանձնարարված է ռուս ժողովրդի միութեան հարաւ-ռուսական նախկին համագումարի անունից միջնորդութիւն հարուցանել ռուսական դպրոցները հրէայ ուսուցիչներից և հրէական կապիտալին վաճառված պրօֆեսօրներից մաքրելու և այն բոլոր դպրոցները, որոնք գտնվում են զանազան մինիստրութիւնների իրաւասութեան ներքոյ, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեանը յանձնելու։ Միևնոյն ժամանակ Պետական Դումայի քննութեանը ներկայացված կադետական հարցապնդումը՝ Օդեսսայի համալսարանի պրօֆեսօրներ Զանչևսկուն, Վասկովսկուն, Եարօշենկոյին և Կօսինսկուն հեռացնելու մասին թոյլ չը տալ քննելու։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 14 նոյեմբերի

«Գործի» 40-դ համարին մէջ՝ «Հին կարգերը դեռ շարունակվում են» վերնագիրը խորագրող պ. յօդուածագիրը բանդագուշած էր այսպէս.

«Քաղաքամիջի ուսուցիչներից Արմենակ Տ. Փօղոսեան և Սենեքերիմ Շալճեան խուզարկութեան միջոցին գաղտնի յարաբերութեանց մէջ եղած են դաւաճան կարապետի (տ. Աւօեանի) հետ, և կը լսուի որ քաղաքամիջի զէնքերու ցուցակը Սենեքերիմ տուած լինի»։

Արմենակ և Սենեքերիմ մասնակից դաւաճանութեան... Արևին արևմուտքէն ծագելն այնքան անհաւանական չէր մեզ համար, որքան այս խայտառակ և անխիղճ զրպարտութիւնը, որ ենթականերուն անգիտ արժանիքը աղարտել չզօրելէ զատ, զայն առաւել ևս բարձրացնելու բնոյթն միայն կարող է ունենալ... Եթէ դուք միայն «կը լսուի»-ներու վրայ յենուած չէք քաշուիր խաղալ միշտ ազնիւ՝ բայց ձեզ ոչ գաղափարակից անհատներու յաւէտ մաքուր պատւոյն հետ, լաւ պէտք է գիտնաք, որ մենք ոչ միայն լսած, այլ նոյնիսկ տեսած ենք ամենաթունոտ յեղափոխական գործիչներ, որոնք ոչ միայն պահարաններ քանդելով ահագին քանակութեամբ ռազմամթերք նուիրեցին թիւրք պաշտօնեաներուն... «իրենց հաւատարիմ ծառայութիւնները մատուցանելով կառավարութեան», այլ նաև պաշտօնէութեամբ մերկացուցին ծածկագրերը...։ Խնդրեմ, ասացէք, ուղղախօս պ., ովքե՞ր էին բօմբաներ կարմիր սուլթանին փէշքաշ անողները...։ Արդեօք «տիրացունե՞ր» էին անոնք, «ռէակցիօն տարրե՞ր»... «պահպանողական խալիֆանե՞ր»... թէ մաքուր ու վսեմ յեղափոխականներ...։ Ի՞նչ կանէիք երէկ, և ի՞նչ կը խօսիք այսօր։ Կերևի ժողովրդի աչքեր բոլորովին փակուած համարելով՝ կը կարծէք թէ պիտի յաջողիք ձեր պատւական, պոչաւոր սուտերը հալած իւղի նման կլլեցնել տալ։ Եթէ Արմենակներ և Սենեքերիմներ տեղի տային զօրի վարդապետութեան առաջ, այժմ բնաւ դաւաճան չէին անուանուեր, այնպէս չէ՞։ Է՜հ, սիրելիս, հին երգը շատ անհամացաւ... Ջանացէք ձեր ես-էն առաջ տեսնել արդարութիւն և ժողովրդի իրական շահը։

Ցաւալի է ասել, որ մենք հոս լրագրի միջոցաւ չենք կարող մերկացնել այն զօրաւոր և անպարտելի փաստեր, որոնք բոպէապէս կարող են հաստատել Արմենակի և Սենեքերիմի բացարձակ անմեղութիւնը... որով պատւոյ դատ կը բանանք, պահանջելով որ 3 տարբեր կուսակցութիւններէն անկողմնակալ քննիչ յանձնախումբ մը կազմուի, Վանի մէջ, ենթարկելու խնդիրը ընկերական դատարանի, քննելու և պատժելու յանցաւորը. հոն մեր ներկայացուցիչը պատրաստ կը լինի, երբ յանձնախումբը կազմուի։

Եթէ ասով չբաւականանացաք՝ մենք ճարահատ, շատ տխուր երևոյթներու քօղը վար առնել պիտի պարտաւորինք։

Իրազէկ

—

Բագու, 12 նոյեմբերի

«Մշակ» լրագրի 234-րդ համարում «Ծխական» ստորագրութեամբ մի թղթակցութիւն էր զետեղված, որտեղ նկարագրում է քաղաքիս հայոց ծխական դպրոցների աշակերտների այն ծանր դրութիւնը, որ առաջ է եկել թոշակ չը տալու պատճառով դպրոցից արձակվելուց։ Խօսելով դպրոցների նիւթական դրութեան մասին, որտեղից երեխաները հեռացվում են թոշակը չը վճարելու պատճառով, պ. Ծխականը նկատում է, որ հակառակ ամենուրեք գոյութիւն ունեցող սովորութեան, անգամ յետ ընկած գիւղերում, ծխակ. հոգաբարձութիւնները, որոնց յանձնված է դպրոցական գործի հոգատարութիւնը, իրանց պարտականութիւնները կատարում են ձրիապէս, այն ինչ Բագուի ծխական հոգաբարձուներից մէկը, իբրև հոգաբարձու տարեկան 1200 ր. վարձատրութիւն է ստանում, մինչդեռ այդ գումարով կարելի էր մի նոր բաժանմունք բանալ և 50 երեխաների կրթութիւն տալ։

Բագուի ծխական դպրոցների հոգաբարձութիւնը, որի գործունէութեանն է վերաբերում այդ թղթակցութիւնը, իր պարտականութիւնն է համարում շօշափված խնդիրը ըստ էութեան բացատրել և ցոյց տալ, որ պ. Ծխականի կողմից հարցին սխալ լուսաբանութիւնը ամենայն հաւանականօրէն թիւրիմացութեան արդիւնք է՝ գործին անգիտակ լինելուց առաջացած։

Մեր հոգաբարձութեան բոլոր անդամները իրանց հոգաբարձական աշխատանքի համար բացարձակապէս ոչ մի վարձատրութիւն չեն ստանում, ի թիւս նրանց նաև այն հոգաբարձուն, որի մասին թղթակցութեան մէջ ակնարկներ է անում պ. Ծխականը։ Բացի այն աշխատանքից, որ բարդված է հոգաբարձութեանս անդամներից իւրաքանչիւրի վրայ, ծխական տուրքի գանձման ծանր գործը, որը մեր դպրոցների գոյութեան գլխաւոր աղբիւրն է կազմում և որը կատարվում է մի խումբ մարդկանց միջոցով, պահանջում է առանձին վերահսկող, որը օրական մի քանի ժամ (3—5 ժ.) գործադրի այդ բարդ գործի կարգաւորման վրայ։ Ծխական ժողովից ընտրված ֆինանսական մասնաժողովի և հոգաբարձութեան որոշմամբ և ապա ծխականների ընդհանուր ժողովի վճռով սկզբունքով որոշվել է ծխական տուրքի գանձման դեկավարութիւնը և վերահսկողութիւնը յանձնել հոգաբարձութեանս անդամներից մէկին. ընդամին թէ հոգաբարձութիւնը և թէ ծխական ժողովը անհրաժեշտ են համարել, ի նկատի ունենալով Բագուի կեանքի պայմանները և գործի շահը, ծխական տուրքի գանձման գործի դեկավարութիւնն ու վերահսկողութիւնը, յանձնելով հոգաբարձութեանս անդամներից մէկին, յատկացնել նրան 1300 ր. վարձատրութիւն, համարելով այդ աշխատանքը իբրև մասնաւոր գործ։ Վերև յիշվածից պարզ երևում է, որ ոչ հոգաբարձութիւնը և ոչ էլ ծխականների ընդհանուր ժողովը, պ. Ծխականի կարծիքի հակառակ, արդարութեան սկզբունքի դէմ չեն մեղանչել։

Ցաւալի է միայն, որ այս անգամ պ. Ծխականը գործին բաւարար չափով անտեղեակ լինելու շնորհիւ շօշափում է յատկապէս հոգաբարձութեանս այն անդամի գործունէութիւնը, որ մեր դպրոցների բացման օրից եռանդով աշխատում է Բագուի դպրոցների օգտին, տոգորված սիրով դէպի մայրենի դպրոցը և նուիրված նրա առաջադիմութեան։

Նախագահ Բագուի եկեղեցական ծխական հոգաբարձութեան՝

Միքայէլ Պապաջանեանց

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՆԻԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

—

Անին որպէս վանք չունի իր սեփական հողերը և էջմիածնից այնտեղ նշանակված վանահայրերը կը ստանան տարեկան 300 րուբլի ռոճիկ և 90 պուդ ցորեն իրանց օրապահի համար։ Հասկանալի է, որ ամայի անապատում և աւերակների մէջ ճգնող այդ վանահայրը չէ կարող չունենալ իր հետ 2—3 հոգի ևս որպէս սպասաւոր, ծառայ և պահապան, և այդ բոլորի կեանքի հոգսը ծանրանում է այդ վանահօր վրայ, որը՝ ինչ կուզի թող ուզի՝ պիտի կշտացնէ անապատում զրկումների կեանքը իր հետ բաժանող այդ ընկերները։

Շրջակայի բոլոր մեծ կենտրոններից հեռի՝ լքումի այդ մենակութեան մէջ՝ կացութիւնը, որը նկարագրեցի՝ թերևս մի կերպ տանելի լինէր առանց այն մեծ հետաքրքրութեան, որը զարթեցրել են 3—4 տարիներից ի վեր Անիում կատարված հնագիտական պեղումները, որի շնորհիւ և դարեր ու դարեր մոռացութեան տրված շքեղ մայրաքաղաքը սկսել է դէպի ինքը քաշել հազարաւոր բազմութիւն առաւել կամ նուազ կարևոր այցելուներ։ Ահա այդ մեծ թիւ այցելուներին հարկ է լինում մի առնուազը «սամավար» տաքացնել, էլ չասեմ որ երբեմն ամբողջ տասնեակներով հաշւվող խմբեր օրերով մնում են այնտեղ և հաց էլ ուտում։

Լինում են անշուշտ և նուիրատուութիւններ այցելողների կողմից, բայց այդ տրվածը սպառածի գինն էլ չէ շատ անգամ։

Իսկ հարիւրաւոր Թափառիկներ, աղքատներ, աշակերտներ և ամեն կերպ խնդձեր գալիս են Անի, որպէս հայոց վանքը (ուր դարերից ի վեր Նուիրական սովորութիւն է դոնել ձրի հիւրասիրութիւն) և, ի հարկէ, ոչ մի գրօշ էլ չեն նուիրում։

Իբրեւ այս գրութեան մէջ ահա—այս արդէն երկու տարի է—Էջմիածնի յատկացրած պտղի 90 պուդ ցորենն էլ վիճակից չը ստացվելուն պատճառով չէ էլ կարելի եղել հատուցանել Անիի վանահօր. աւելացնելով սրա վրա նաև վերջին տարվայ երաշտութեան պատճառած նուաղութիւնը՝ հեշտ կը լինի երեւակայել մեր Միքայէլ վարդապետի դրութիւնը, այն վարդապետի, որի աղն ու հացը կերած բոլոր բարեկամներին եմ դիմում ես, վկայելով որ նրա կապալով վերցրած արտի կապալավարձ 72 ռուբլին էլ մնացել է պարտք...։

Խնդրվածը չը լինելով ոչ մի ծով և ոչ էլ մի սար, այլ մի 3—400 ռուբլի դրամ, վերականգնելու համար մի քայքայված տնտեսութիւն՝ նրան հասցնելու համար մինչև առաջիկայ հունձքը, հաւատացած եմ, որ Անիի վանահայր Միքայէլ վարդապետի պէս վերին աստիճան անձնուէր և յարգելի մարդը չի մնայ անուշադիր, մանաւանդ իր հիւրասիրութիւնը տեսած բարեկամների կողմից։ Նուիրատուութիւնները ստացվում են «Մշակի» խմբագրութեան մէջ։

Ա. Ֆէթվաճեան

ՔԵՇԼԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆՆ ԵՆՔ ՀՐԱՒԻՐՈՒՄ

Բագու, 15 նոյեմբերի

«Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է, որ այս տարվայ սկզբին Բագուի և Բալախանիի միջև գտնվող «Քէշլի» փոքրիկ կայարանի մօտ շոգեմեքենայի տակ 7 հայ բանուորներ մնացին, որոնցից երկուսը անդամալոյծ, իսկ երեքը՝ ջարդ-փշուր եղած մահացան։

Այդ առիթով «Մշակին» հենց դժբաղդութիւն պատահած օրն էլ հաղորդեցի. աւելի մանրամասն, երբ Թղթակցի կոչումը ինձ ստիպեց անձամբ գիտել ինչպէս մահացածների դիակները, նոյնպէս և հաշմանդամներին։ Սակայն, որքան էլ լինի, ընթերցողները մանրամասնութիւնները մոռացած կը լինեն, ուստի աւելորդ չեմ համարում եղելութեան համառօտ բովանդակութիւնը մատնանշել սոյն Թղթակցութեանս մէջ, մանաւանդ որ ինչ որ պիտի գրեմ ուշադրութեան արժանի երևոյթ պիտի հանդիսանայ ընդհանրապէս Բագուի շրջանի, իսկ մասնաւորապէս Քէշլի արուարձանի բնակիչների համար։

Այս տարվայ սկզբին ձմեռ լինելով՝ Բալախանում աշխատող բանուորները Քէշլի արուարձանից (Թւով 40—50 հոգի) սպասում են «Քէշլի» կայարանում, որպէսզի գնացքը Բալախանի անցնելիս նստեն ու գնան այնտեղի նաւթահանքերը աշխատելու։ Այդ սպասելու ժամանակ հարբած մեքենայապետը շոգեմեքենային ուղղակի ընթացք է տալիս դէպի բանուորների սպասած ուղին և մեքենայի տակ է տալիս եօթ բանուորներ, ապա, իր կեանքը բանուորների ճանկից ազատելու համար (որպէսզի չը յարձակվեն մեքենայի վրա), չորս անգամ մեքենայապետը ատրճանակ է արձակում ու անցնում։

Այդ տխուր երևոյթից յետոյ սպանվածների և դժբաղդների ընտանիքները մինչև այսօր էլ ձեռքները ծոցներին դրած սպասում են, Թէ ով պիտի լինի իրանց արցունք սրբողը։ Ոչ ոք չունեն դրանք, որպէսզի գոնէ խօսքի մխիթարանք պատճառեն։

Այսօր ինձ մօտ եկաւ մի պատկառելի պարոն և յայտնեց, որ դժբաղդացած ընտանիքներից մէկի համար միջնորդել և դատը պաշտպանել է տուել երկաթուղու վարչութեան դէմ դատարանի առաջ, ուստի և խնդրում է յայտարարել ի գիտութիւն միւս սպանվածների տէրերի, որպէսզի նրանք էլ դիմեն օրինաւոր դատարանին և ստանան սպանվածների օգտին մի որոշ գումար, ինչպիսին (6000 ր.) ստացել է առաջին գործ սկսողը։

Ուստի իմ պարտականութիւնս եմ համարում հաղորդել «Մշակի» միջոցով ի գիտութիւն Քէշլիի բնակիչների և նրանց դժբաղդութեանը ցաւող հետաքրքրվողների։

Ս. Գարագաշ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱԿՑՈՒԹՈՒՆ ԻԶՄԻՐԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 23-ին ֆրանսիական աչքի ընկնող Թերթերից մէկի Թղթակիցը, որ Իզմիրլեան սրբազանին դեռ նրա նախկին պատրիարքութեան ժամանակից ծանօթ էր, այցելել է վերընտրված պատրիարքին և, տեսնելով նրան քաջառողջ, յայտնել է իր ուրախութիւնն ու շնորհաւորութիւնները։

Առիթից օգտուտ քաղելով, Իզմիրլեանը հարցրել է Թղթակցին, Թէ ինչ են մտածում եւրոպական մեծ պետութիւնները սահմանադրական Թիւրքիայի մասին։ Թղթակիցը պատասխանել է, Թէ պետութիւնները խիստ ուրախ են այս բարեփոխութեան համար։

Իզմիրլեան.—Մենք ցանկանում ենք, որ մեծ պետութիւնները ոչ միայն ուրախանան Թիւրքիայի ռէժիմի բարեփոխութեամբ, այլ և կանոնաւորապէս ու տեականօրէն օգնեն Թիւրքական սահմանադրութեան արդիւնաւորմանը՝ առանց շատ խորհելու իրանց շահերի մասին։

Թղթակցի այն հարցին, Թէ ինչ դրութեան մէջ են հայկական գաւառները, պատրիարքը պատասխանել է, որ նրանց վիճակը ճիշտ նման է այն դրութեան, որին մատնված էին 1894 Թւին։

Թղթակից.—Այդ գաւառների ներկայ դրութիւնը բարելաւելու համար միջոցներ ձեռք առնված են։

Իզմիրլեան.—Պատրիարքարանը ազգ. ժողովի կողմից մի պատգամաւորութեամբ պաշտօնապէս դիմեց մեծ վէզիրին և մի յիշատակագիր մատուցեց նրան։ Մեծ վէզիրը խոստացաւ անմիջապէս նկատողութեան առնել այս խնդիրը։ Հայերը մեծ բան չեն պահանջում, բացի պատւի, գոյքի և կեանքի ապահովութիւնից։ Ես իմ առաջին պատրիարքութեան ժամանակ էլ այս նոյն պահանջն արի կառավարութիւնից, բայց դժբաղդաբար իմ պահանջները տարբեր կերպով մեկնվեցին և ես իբր յեղափոխական նկատվեցի։ Իմ պահանջը միևնոյնն է այժմ, և յոյս ունեմ, Թէ սահմանադրական կառավարութիւնը կը կատարէ իր պարտքը հայկական գաւառների ու ամբողջ Թիւրքիայի վերաբերմամբ։

Թղթակցի մեկնման ժամանակ Իզմիրլեանը գիտել տուեց, Թէ ինքը ուրախ կը լինի, եթէ Թղթակիցները հաւատարմութեամբ կատարեն իրանց պաշտօնը։

Տեսակցութեան ընթացքում Թարգմանի պաշտօն է կատարել Բարգէն ծ. վ. Կիւլէսէրեան։

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

✦ Երզնկայի Թիւրքերը, ինչպէս հաղորդվում է, փութով զինվում են, և նրանց յարաբերութիւնը հայերի հետ օրէ ցօր սառչում է։

✦ Աւստրիա-Ունգարիայի կայսր Ֆրանց-Յովսէփը Կ. Պօլսի իր դեսպան մարքիզ Պալլավիչինիի միջոցով հոկտ. 27-ին պատրիարքարան է ուղարկել Ֆրանց-Յովսէփ պատւանշանի Մեծ-Խաչը՝ Նիկոմիդիայի առաջնորդ Ստեփաննոս արքեպ. Յովակիմեանին յանձնելու համար։ Յիշեալ պատւանշանն անմիջապէս ուղարկվել Նիկոմիդիա։ Ստեփաննոս արքեպ. Յովակիմեան արժանացել է այդ պատւանշանին այն բանի համար, որ վերջերս յատուկ դիւրութիւններ է ընծայել ունգարացի հանգուցեալ հերոս Ռակոցցի իշխանի ոսկերոտիքի, որ ամփոփված էր Նիկոմիդիայի հայոց գերեզմանատանը, փոխադրութեանը դէպի Ունգարիա։ Բացի դրանից, յիշեալ առաջնորդը ամեն տարի հոգեհանգիստ է կատարելիս եղել հանգուցեալի հոգւոյն վրա։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

18 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մի օրում խօլերայով հիւանդացան 15, մեռան 4 հոգի։

Շուշու գաւառում խօլերայով հիւանդացել և մեռել են 4 հոգի։

Պրոֆեսօրների խորհուրդը համալսարանի վերատեսուչ ընտրեց ընդհանուր պատմութեան պրոֆեսոր Գրիմմին։

Մինիստրների Խորհրդի նախագահը տեղեկացրեց Դումայի նախագահին, որ Թագաւոր կայսրը նոյեմբերի 10-ի ամենահպատակ զեկուցման համաձայն Բարձրագոյնս Թոյլատրեց Դումայի անդամներ կոմս Դոբրէրին, Սինատինօյին և Գերցենվէյցին նշանակել այն գերագոյն յանձնաժողովի անդամներ, որին պաշտօն է տրված բազմակողմանի կերպով քննել Ռուսաստանի երկաթուղային գործը։

Առևտրի մինիստրութեանը կից կազմվեց մի միջ-վարչական մասնաժողով բորսային արտէլների 1905 Թ. յուն. 16-ի կանոնները վերաքննելու համար։

Ներքին գործերի մինիստրը Դումա մտցրեց մի օրինագիծ, որով առաջարկ է լինում իրաւունք տալ Դումային ստանալ արտասահմանից ամեն տեսակի գրուածքներ առանց գրաքննիչի և առանց մաքսի։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։
Հիւանդների ընդունելութիւնը { 12—1 առաւօտեան, 5—6 երեկոյեան
Միքայէլեան փող., № 36, տ. Ճավճանիձէի։
100—59

ԲԺԻՇԿ
Ա. Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ, առանձնապէս սրտի և Թոքերի հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը՝ 11—1 ժ. առաւօտեան, 5—6 ժ. երեկոյեան։
Սօլօլակսկայա փ. № 6. տ. Միրզօյեվի
(օ. մ.) 50—4

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.
Վելիամինօվսկայա փող., № 10.
(օ. մ.) 100—18

ԲԺԻՇԿ Ն. Ա. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ
Ներքին եւ երեխայոց
հիւանդութիւնների
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է { առաւօտեան 12—2 ժ. երեկոյեան 5—7 ժ.
Օլգինսկայա փողոց, № 14.
(շ. ե. հ.) 20—12

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Սիֆիլիս, վեներական, միզատեղական եւ մորթի ցաւեր
Ընդունելութիւն ամեն օր { 12—2 ժ. ցեր. 5—7 ժ. երեկ.
Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(հ. շ.) 100—25

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ
որը առողջ է և գործի ընդունակ, խնդրում է տալ իրան շվէյցարի, գիշերապահի, դռնապանի կամ որևէ նման պաշտօն։ Գիտէ հայերէն, ռուսերէն գրել ու կարդալ, և Թուրքերէն խօսել։ Հասցէն իմանալ քաղաքային վարչութեան մէջ ատագ ստորոժ Սիմոնի մօտ։

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ"
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ
«Этикетъ утвержденъ прав.» մակագրութեամբ։

Գլխաւոր պահեստատեղը Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
(10, 20, 30) 50—27

Բացված է առաջիկայ 1909 Թ. բաժանորդագրութիւնը
ԱՂԲԻՒՐԻ եւ ՏԱՐԱԶԻ
XXVII տարի XX
Պրէմիաներն են՝ ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ 18 գոյներով մեծադիր և փառահեղ պատկերը, 2) ԱՂԲԻՒՐԻ ակումբը (Աղբիւր-Տարազի աշխատակիցների պատկերները), 3) Գեղափնջիկ, 4) ԱՌՈՂՋԱՊԱՀ։ Կը հրատարակվեն ձրի։ Իսկ լոյս տեսնող №№-ի քանակն ու ծաւալը կախում կունենան վճարող բաժանորդների քանակից։
ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահման 5 ր.)
ՏԱՐԱԶԻ » » 6 ր. (» 10 ր.)
ԱՂԲԻՒՐ, ՏԱՐԱԶ պրէմիաներով, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՎ, ԳԵՂԱՓՆՋԻԿՈՎ 10 ռուբ. (արտասահման 18 ր.)։ Ապառիկ և մաս-մաս վճարով բաժանորդներ չեն ընդունվում։
Նրանք, որոնք բաժանորդ կը գրվեն այս նոյեմբերի ընթացքում, կը ստանան ԱՂԲԻՒՐԻ և ՏԱՐԱԶԻ Տօլստոյեան №№ էլ ձրի այս նոյեմբերին։
Тифлисъ, редакція АГБЮРЪ-ТАРАЗЪ. Rédaction Aghbur-Taraz, Tiflis (Caucase)
Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԻՆՉ ԿԵՐՊ ԿԱՐԵԼԻ Է ՀԱՐՍՏԱՆԱԼ
Թէ ինչպէս կարճ ժամանակի ընթացքում փոքր գումարով իւրաքանչիւր մարդ կարող է հարստանալ, եթէ միայն ցանկանում է։ Հարկաւոր է միայն իւրաքանչիւրին օգտվել դէպքից։ Հաղորդեցէք միայն ձեր հասցէն և դուք շուտով՝ առաջին պօստով՝ կը ստանաք ձրիաբար գրքոյկը և բոլոր բացատրութիւնները։
Հասցէագրել՝ С.-Петербургъ, 5-ое почтовое отдѣленіе, лит. Б. Д. С.

ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆ Է



բերել տալ միայն մշտական օրացոյց ունեցող ժամացոյց։
Ամեն մի մարդու քիչ չի լինի պատահած, երբ նա հարկաւոր մոմենտում դժուարացել է իմանալ՝ Թէ ո՛ր օրն է և ամսի քանիսը։ Քիչ կորուստ չէ եղել հէնց նրանից, որ անկարելի է եղել ստոյգ որոշել ամսաԹիւը։ Դրա համար էլ իւրաքանչիւրին անհրաժեշտ պահանջ պիտի զգացվի ունենալ այնպիսի ժամացոյց, որը շարունակ կարողանայ ճշգրիտ կերպով ցոյց տալ հարկաւոր ժամանակաշրջանը։ Ես պայմանաւորվել եմ ժամացոյց-օրացոյց պատրաստող շվէյցարական խոշորագոյն Փաբրիկաներից մէկի հետ և կարողանում եմ ուղարկել այդ տեսակ ժամացոյց չը տեսնված գնով, միայն
4 ռուբլի 50 կոպէկով. 2 հատը—8 ռուբլի 50 կոպէկ։
Այդ ժամացոյցը իսկական «Անկեր» է, ընԹացքը 15 քարի վրա, սև պողպատից, լարելը 40 ժամը մի անգամ, մետաղէ ցիֆերբլատով, աւտոմատիկ կերպով ցոյց է տալիս օրը, ամսաԹիւը և ամիսը։ Ճանապարհածախքը 1—4 ժամացոյցի համար 40 կոպ., Սիբիր—75 կ.։ Նորաձև ոսկուց կարճ շղԹայ՝ բրելօկով—75 կ. և 1 ր. 50 կ., երկար շղԹայ—2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Ուղարկումը վերադիր վճարով և առանց կանխավճարի։
Հասցէ. Единств. П ред. И. ШТРУМФЕЛЬДЪ, Варшава, Св. Креста № 48.
ԹղԹակցուԹիւնները ռուսերէն և գերմաներէն լեզուներով։

ՀԵՏԵՒԵՑԷՔ ՄՕԴԱՅԻՆ

Ամբողջ Եւրոպան այժմ գործ է ածում միայն «Патентъ 1-ый сортъ» նոր ժամացոյցը։ Այդ ժամացոյցը տափակ է (քիչ հաստ արծաԹէ ռուբլանոցից), սև պողպատից, ընԹացքը քարերի վրա՝ ռէմօնտուար, լարելը առանց բանալիի՝ 40 ժամը մի անգամ։ Ժամացոյցի ձևը այնքան շքեղ է, որ ամեն մի մարդու ճաշակին բաւարարուԹիւն կարող է տալ (տես նկարը)։ Որպէսզի կարելի լինի ծանօԹացնել Ռուսաստանին այդ գեղեցիկ ժամացոյցի հետ, Փաբրիկան նշանակել է շատ էժան գին—3 ր. 25 կ., իսկ երկու հատը՝ 6 ր.։ այդ ձևի կանացի ժամացոյց—4 ր. 25 կ., երկու հատը՝ 8 ր.։ Այդ ձևի արծաԹեայ ժամացոյց տղամարդկանց համար—5 ր. 75 կ., երկուսը՝ 11 ր.։ ԵԹէ դուք գեղեցկի սիրահար էք, բերել տուէք այդ ժամացոյցը և դուք ընդմիշտ շնորհակալ կը լինէք։ Ամեն մի ժամացոյցը ապահովված է 6 տարվայ երաշխաւորուԹեամբ։ Ճանապարհածախքը 1—4 հատի համար 40 կ., Սիբիր՝ 75 կ.։ Ուղարկումը վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Կարճ շղԹայ՝ նոր ձևի ոսկուց՝ բրելօկով—75 կ. և 1 ր. 50 կ., երկար շղԹայ—2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Հասցէագրել՝ И. ШТРУМФЕЛЬДЪ, Варшава, Св. Креста, 189.
14—12



„ՊՐՕՎՕԴՆԻԿ"
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՌԻԳԱՅՈՒՄ
1888
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Սօլօլակսկայա փող., № 4.
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ
ՌԵԶԻՆԱՊԱՏ ԱՆԹԱՓԱՆՑԻԿ ՎԵՐՆԱԶԳԵՍՏՆԵՐ
Արտասահմանեան նոր ձևի, պատրաստված անգլիական ամենալաւ կտորներից սկսած մինչև ամենաէժան կտորները.
ՌԵԶԻՆԱՊԱՏ ՊԼԱՇՉՆԵՐ ԵՒ ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ պարոնայք օֆիցէրների համար.
ՌԵԶԻՆԱՊԱՏ ԿՏՈՐԵՂԷՆՆԵՐ զանազան կարիքների համար.
ՌԵԶԻՆԻ ՍՊՈՒՆԳՆԵՐ.
ՍԱՆՐԵՐ եղջերեայ ռեզինից
Հատավաճառութիւն աշխարհի ամենալաւ
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ „ՊՐՕՎՕԴՆԻԿ"
(№ 4) 25—3